



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

**Սույն ստեղծագործությունը հասանելի է
Հայաստանի ազգային գրադարանի
թվային շտեմարաններում՝ համաձայն
դրա իրավատիրոջ հետ կնքած
Համագործակցության պայմանագրի, և
կարող է օգտագործվել բացառապես
օրենքով նախատեսված կարգով՝
պահպանելով հեղինակի և իրավատիրոջ
հեղինակային իրավունքները**

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ
ՄՏՔԻ ԵՎ ԽՂՃԻ

891.99

Ն-98

110-193-6

27
-6 MAY 2011



891.99

U-98

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՄՏՔԻ ԵՎ ԽՂՃԻ

(Հոդվածներ, հարցազրույցներ)

Երևան, «Նաիրի», 2001

ՀՈԴՎԱԾՆԵՐ


07.08.2013

56.422

ՀԱԳԵՎՈՐ ՀԱՅՐ ԼԻՆԵԼԸ ՊԱՏԻՎ Է ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Առաջին պահին թվում է, թե ամեն ինչ կարող եմ ասել մեր հոգևոր եղբոր մասին, մինչդեռ ինչպես կարող եմ պատմել ու սպառել կոչումով հոգևորական, ճակատագրով՝ գիտնական ու առաջնորդ Խաժակ սրբազանի մասին, որի ուսերին ծանրանում են քահանայական ծառայության քսանհինգ տարիներ, տարիներ, որոնց յուրաքանչյուր օրը եղել է գործ, աքնում, արարում: Աշխարհում չկա այնպիսի չափ ու կշռի միավոր, որով հնարավոր լինի գնահատել եկեղեցասիրությունը, հայրենասիրությունը, գթասրտությունը, իսկ Խաժակ սրբազանի մտահղացումներն ու իրականացրած ծրագրերը խարսխված են եղել այս վեհասքանչ զգացումներով, որն էլ ուսանելի է մեր և եկող սերունդների համար»:

Այս բարձր, բնորոշող գնահատականն արդարորեն տվել է երջանկահիշատակ Գարեգին Ա հայրապետը, քանզի այն ճանապարհը, որով քայլել է Պարսամյան հոգևորականը, Հայոց Եկեղեցու անցյալը, ներկան ու ապագան է: Նրա կյանքն ու գործը եղել է առաքելություն ու արարում՝ ստեղծելով «հիշատակի տաճարներ»: Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի բազմաշերտ գործունեության էջերից որն էլ նժարի վրա դնենք, անպայման պատմության մեջ նրանց համար տեղ կգտնվի: Նա պարզ է, համեստ, շիտակ ու միաժամանակ խիզախ, առաքինություններ, որոնք և՛ ավետարանական, և՛ մարդկային են՝ բնական ու հասկանալի: Այս բնածին շնորհներով սրբազան հայրն առանձնանում է շրջապատից և դառնում շատերին սիրելի:



1069-2001

Խաժակ արքեպիսկոպոսը ոչ թե սքեմով, ի պաշտոնե, այլ կոչումով հոգևորական է և ազգի յուրաքանչյուր անդամի համար՝ սրտացավ հայր։ Այս գիտակցությամբ է նա իր երիտասարդ ու փոքր տարիները նվիրաբերել եկեղեցուն ու ժողովրդին։ Ուրիշ մտածումներ ու տարուբերումներ չէր կարող ունենալ նա, որին սրտամոտ էին հատկապես Գևորգ Զ Չորեքյան առաքինազարդ կաթողիկոսի խորհրդածությունները. «Ի՞նչ է հոգևորականն առանց սիրո, կոչման և անձնվիրության, եթե ոչ մի ձևապաշտ պաշտոնյա՝ կոչված յուր որովայնին ծառայելու, փոխանակ մեր հոգու ազնվացման ճշմարիտ սպասավոր լինելու։ Մերն ու անձնվիրությունն են, որ ազնվացնում են հոգևորականին և սրբացնելով նրան՝ պաշտամունքի առարկա են դարձնում»։

Հայր լինելը պատիվ է և պարտականություն։ Խաժակ սրբազանը ունի թե՛ մեկի, թե՛ մյուսի գիտակցումը։ Ուստի հոգևորականը փնտրել հոգևորականի մեջ անհեթեթ է և անիմաստ։ Խաժակ սրբազանը հավատացյալ է ոչ միայն նրա համար, որ աչքը բացել է եկեղեցուն և կրոնը եղել է նրան սնունդ, այլ որ նրա մեջ հավատը աներկմիտ է, հույսը՝ անսպառ, կամքը՝ անկոտրում։ Ինչպես սրբազան հայրն է մի առիթով ասել. «Մարդն առանց հավատի չի կարող ապրել, հավատը ոչ միայն բուժում, խաղաղեցնում է խռովահույզ հոգին, այն դաստիարակում, զարգացնում է բանականությունն ու զգացումները»։ Եթե ուզում ենք հանրային գործչի մեջ փնտրել հայրենասերը, ապա պետք է վերցնել նրա իմաստնացած կյանքի յուրաքանչյուր օրը, լսել խոսքն ու զրույցը, քանզի նրա ձևակերպած սկզբունքներն իրենց մեջ պարունակում են ազգային մտահոգությունների ու հետաքրքրությունների մի լայն շրջանակ։

«Այսօր ավելի քան երբեք անհրաժեշտ է հայրենասիրություն ցուցաբերել մեր միակ, հարազատ Մայր երկրի նկատմամբ։ Բոլոր հայերս լավ ըմբռնենք այս ճշմար-

տությունը և գիտակից սիրով, եռանդով ու երախտագիտության զգացումով նորոգված՝ փարվենք այդ հայրենիքին, հաղորդակից լինենք նրա հետ, ներշնչվենք նրա հոգուց և մեր նոր սերունդը հայրենիքի ջահերը դարձնենք՝ զաղուքների մեջ ստեղծենք ճշմարիտ ու իրապաշտ հայրենասիրության մթնոլորտ։ Այսուհետև, սփյուռքահայությունն այլևս կղզիացած ու անպաշտպան բազմություն չէ, այլ օրգանական մեկ մասը Հայաստանի ժողովրդի»։

Այս գաղափարը լոկ խոսք կամ վերացական երազանք չմնաց, այլ այն դարձավ կենդանի ծրագիր, դեպի գործ մղող հոգեկան ուժ, ազնիվ ու արդար պայքարի դրոշակ։ Այս ոգով ու նման նշանաբանով սրբազան հայրը վերջին տասը տարիների փոթորկահույզ շրջանն անցավ իր ժողովրդի հետ, հոգեկան արիությամբ ու խաղաղությամբ իր բովանդակ ուժերով մասնակցեց մահու և կենաց մաքառումներին։ Ո՞վ կմոռանա Խաժակ սրբազանի կոչերն ու հորդորները, որ նա, երբեմն կոշտ, երբեմն խնդրելով ու համոզելով, բարձրացրել է ամերիկյան, եվրոպական տարբեր ամբիոններից ցեղասպանության, արցախյան հարցի, հայրենիքի վերաշինության մասին կամ ինչպե՞ս կմոռացվի այն հսկայական նյութական օգնությունը, որ առաքել և շարունակում է կազմակերպել Ամերիկայից Հայաստան ազնիվ առաջնորդը, և մի՞թե հնարավոր է չհիշել, թե ինչպես փխրուն հոգու տեր հոգևորականը ինչպիսի սրտացավությամբ է չորացնում որդեկորույս մայրերի արցունքները և որպես մխիթարական ու կենարար խոսք-պատգամ հղում՝ «Ոչ թողից զձեզ որքս, գամ առ ձեզ»։ Կենսափորձով իմաստնացած հոգևորականը կրկին պնդում է, որ համատեղ ջանքերով կարելի է կանխել աղետը և պատասխան տալ մեր կյանքի բազում հարցականներին։

Խոսել Խաժակ սրբազանի մասին և չանդրադառնալ նրա հիմնական առաքելությանն՝ իբրև ուսուցչի, թերի կլինի ասվածը։ Բնականաբար, հոգևորական-ուսուցչի

մտքերը, ծրագրերը, մոտակա թե հեռավոր նպատակները սերտ կապ ունեն իր ժողովրդի պատմական-ընկերային, մշակութային զարգացման հետ: Եվրոպական և ամերիկյան համալսարաններում կրթություն ստացած, մաքուր ակունքներից սնված՝ իր նկատմամբ եղել է միշտ պահանջկոտ և իր հոտի զավակներին կոչ է արել քայլել հայոց մշակութային արժեքների բավիղներով՝ ազգին ծառայելու գիտակցությամբ, որով տարրալուծվելու, կորսվելու մշուշը կփարատվի, ու թերևս վերածննդի նոր դուռ բացվի Մփյուռքի համար: Սրբազանը օժտված քարոզիչ է, հռետոր, իր խոսքի պարզությամբ ու ջերմությամբ կարող է սրտեր գրավել, կնճիռներ հարթել՝ մարդկանց ներարկելով անկոտրում հավատ ու ջերմ հայրենասիրություն: Նա իր անձով ներկայացնում է հարազատ ժողովրդի զգացողությունների ու ցավերի ամբողջ պատմությունը և անկաշկանդ ու ջերմ խոսքով լիքք ու ոգի հաղորդում նկուն հոգիներին: Խաժակ սրբազանին հասկանալու համար պետք է միշտ նկատի ունենաք նրա մտածելու և միտքն արտահայտելու հստակ ձևը, մոտեցումը:

Խաժակ հոգևորական-գիտնականի ստորոգելիների մաս են կազմում ցանկացած արծարծվող խնդիրը հետազոտելու հմտությունը, պրպտելու մեթոդը և շարադրելու անկաշկանդ ձիրքը: Սրբազանն այդ բոլոր ձիրքերը լիառատ ունի, որոնք դրսևորվեցին նրա «Հայոց Եկեղեցու պատարագին եւ ժամերգութեան ծագումն ու զարգացումը՝ համաձայն ասորական եւ բիզանդական աղբիւրներու» աշխատության մեջ:

Ու, թերևս, վերը նշված բոլոր արժանիքներն էին, որոնք հիմք հանդիսացան, որպեսզի Բնության և հասարակության գիտությունների մասին միջազգային ակադեմիան իսկական անդամի պատվավոր կոչում շնորհեց նրան: Այս շնորհաբաշխումին արժանանալու առիթով շնորհավորում ենք սրբազան հորը և մաղթում, որ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը գործով ու մտքով իր

հաստատուն տեղը զբաղեցնի նաև հայոց ազգային կաճառում, քանզի ինչպես վկայում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը. «Խաժակ սրբազանը միանգամայն արժանի է»:

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՈԳԵՊԱՇՏ ԵՂԱԾ Է...»

Հայ ժողովրդի գլխով անցել են փոթորիկներ և մրրիկներ, բայց նա միշտ բարոյապես և նյութապես իր գերազույնը կատարել է վառ ու պայծառ պահելու հոգևոր համազգային արժեքները, որի խոսուն վկան են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում սրբությամբ պահպանվող ձեռագրերը: Հայ ձեռագիրն էլ, դարերի հոլովության հետ մազապուրծ, տարագրվել է արտասահման և շրջել բազում երկրներ, լիահույս, որ մի օր տուն պիտի դառնա և պատկանի իր բուն տիրոջը՝ հայ ժողովրդին և Մայր հայրենիքին: Յուրաքանչյուր գիտակից հայ, որ նախանձախնդիր է հայկական մշակութային արժեքների պահպանման համար, անում է իր կարելին՝ պանդխտությունից փրկելու ամեն մի ձեռագիր, որ մի սրբություն է հայ դպրության և մշակույթի համար:

Վերջերս Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը կորստից վերջնականապես փրկեց և Մատենադարանին մվիրեց մազադաքյա «Ավետարան» ձեռագիր: Այդ մասին է պատմում Մատենադարանի ձեռագրատան վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Տեր-Վարդանյանը: «Մազադաքյա «Ավետարան» ձեռագիրը, որը 9-րդ դարի է, Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի միակ նվերը

չէ Մատենադարանին: Նա տարբեր առիթներով, իբրև կանոն, միշտ արժեքավոր ձեռագիր է նվիրել մեր հաստատությանը: Երկու տարի առաջ նվիրեց 1270 թվականին Կիլիկիայի մայրաքաղաք Սիսում գրված մի ամբողջական 230 թերթանոց մագաղաթե «Մանրոսմունք», որը նման ձեռագրերի շարքում, իսկապես, մեծ արժեք ունի և մանրոսմունքի մասին մեր իմացությունները պետք է, որ ընդլայնի: Կենսամակարդակի վատթարացման հետևանքով մարդիկ սնդուկներից վաճառքի են հանում ընտանեկան մասունքներ, այդ թվում՝ ձեռագրեր, իսկ Մատենադարանը հնարավորություն չունի գնելու, ուստի դիմում ենք ազգային արժեքները գնահատող մարդկանց օգնությանը: Խաժակ սրբազանը մեծ հաճույքով և պատրաստակամությամբ օգնում է մեզ: Անցյալ տարի նրա տրամադրած գումարով մենք գնեցինք 17-18-րդ դարերի երկու արժեքավոր հմայիլ: Պետք է խոստովանենք, որ երբ ձեռագիր գնելու առիթ է ներկայանում, մենք առաջարկում ենք Խաժակ սրբազանին»:

Չրույցը շարունակում է Մատենադարանի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Մեն Արևատյանը. «Խաժակ սրբազանը քաջ գիտակցում է Մատենադարանի բացառիկ դերն ու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում, քանզի գրապահոցներում պահվող մագաղաթե մատյաններն են, որ հավիտենական գեղեցկությամբ ու խորիմացությամբ կամուրջ են կապում անցյալի ու նորի միջև: Սրբազան հայրը, որի հավատամքն են գիր ու գիրքը, դպրությունն ու իմաստությունը, անում է իր կարելին, որպեսզի մեր հաստատությունը հարստանա նորանոր գանձերով: Ես ուրախ եմ, որ Խաժակ սրբազանը ոչ միայն Մատենադարանի նվիրյալ բարեկամն է, այլև մշակը»:

Ահա այստեղ է, որ հասկանում ես այն ճշմարտությունը խորախորհուրդ, որ հայ ժողովուրդը, մորիկների, փոքորիկների միջով անցած, կարողացել է հարատևել,

որովհետև ունեցել է Խաժակ սրբազանի նման ազգին և եկեղեցուն նվիրյալ զավակներ: Եվ սիրտդ լցվում է ուրախությամբ, ճանաչելով Խաժակ սրբազանին՝ տեսնում ես աստվածատուր օծվածության հետ նրա ավետարանաշունչ համեստությունը: Սևանի «Վազգենյան» դպրանոցի տեսուչ, արձակագիր Սասուն Վարդանյանի խոսքերով ասած՝ «Համեստ է, ազնիվ ու պարկեշտ: Եվ այս բոլոր առաքինությունների թագն ու պսակը՝ մաքուր հավատք և սեր առ Աստված, Ազգն Հայոց ու Եկեղեցին Առաքելական: Սրբազան հայրը իր օրինակով առաջնորդում և սովորեցնում է մեզ՝ լուսավորելով մեր միտքն ու խիղճը: Արդարև, ազնվաշուք սրբազանը երևույթ է հոգևոր աշխարհում»:

Ու մտածում ես՝ ինչպես չհպարտանալ Խաժակ սրբազանով, որի մասին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ֆահեյ Մարգարյանը գոհունակությամբ ընդգծում է. «Մենք հանդիպում ենք հաճախ, խորհրդակցում, մշակում ծրագրեր, որպեսզի մեր ակադեմիային և գիտությանը աջակցի, քանզի փոխվել են ժամանակները և ակադեմիան բարերարների կարիք ունի: Սրբազանը օգնում է, որպեսզի Հայաստանում գիտությունը չմեռնի»:

Պարսամյան հոգևորականի մաքառումներով լի ճակատագրում, ասես, խտանում է հայ ցեղի կենսունակությունն ու ստեղծագործական անսպառ ոգին, որի մասին Շվեյցարիայի հայոց քեմի առաջնորդ Վիգեն Եպիսկոպոս Ալկազյանը հպարտությամբ, առանց երկմտելու, խոստովանում է. «Աստծո տված ամենամեծ պարգևը ինձ համար, որպես ընկեր և բարեկամ, Խաժակ սրբազանն է: Մուրբ հավատքի լույսով լցված նրա կյանքի և գործունեության միակ նպատակը հայ եկեղեցու պայծառությունը, մեր ժողովրդի ու հայրենիքի ծաղկումն է: Նա մի Մարդ է, որի վրա կարելի է հենվել և պետք է

խոստովանեմ, որ նրա ազգանվեր և եկեղեցաշեն գործունեության շնորհիվ է, որ էլ ավելի սերտացավ ամերիկահայ ժողովրդի սերն ու նվիրվածությունը դեպի Հայ Առաքելական Եկեղեցին և հայրենիքը: Բնականաբար, ուրիշ նկարագիր չէր կարող ունենալ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, որին կտակել են՝ «Հայ ժողովուրդը ոգեպաշտ եղած է, և կմնա հավիտյան»: Այս իրողության մեջ է մեր ժողովրդի գոյության իմաստը: Այս ճշմարտության մեջ է նաև մեր ապրելու իրավունքը»:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ... ԵԿԵՂԵՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՍՄԱՐ...

Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան... Հայոց Եկեղեցու կրոնական նշանավոր գործիչ, որի 50-ամյա կյանքի փթթուն ու շողշողուն երիտասարդ երեսուն տարին քահանայական ծառայության բազմաթիվ արժանիքների գոհարներով հյուսված մի շողարձակ մանյակ է: Խաժակ սրբազանի աստվածապարզ սուրբ սիրո զգացումը լուսավորեց նրա հիսուն տարիների կյանքը և բեղմնավորեց երեսուն տարիների հոգևորականի ձեռաց գործերը, որի ծրագրերի պտուղը երկրային՝ երկնայինով է արգասավորված: Խաժակ Պարսամյան հոգևորականի ուսերին հանգչող հիսուն տարիների ելևէջին նայելու փորձն անգամ մեզ հոգեզմայլ պատկառանք է համակում: Ավետարանական սիրո ուժը, Տիրոջ և Փրկչի հավետ կենդանի սիրո հուրը, որի փառքը ինքը՝ մեծ Առաքյալը, երգեց անմահ խոսքերով «կորնթացվոց» ուղղված իր թղթի մեջ. «Մեր ոչ երբեք անկանի...», սեր, որ հայ եկեղեցին իր հավատացյալ զավակներով առատապես բաշխում են

ահա 1700 տարի ի վեր, օգնեցին սրբազանին խորությամբ գիտակցելու եկեղեցական իր դերը՝ անձանձրությամբ աղոթել, անդուլ աշխատել, սուրբ հավատի ու հայրենիքի ծաղկման բարօրության համար: Եվ ոչ միայն կրոնական հավատքը, քրիստոնեական գիտակցությունը ձևավորեցին նրա հիսունամյա էությունը կերպավորող արժանիքները, այլև տիպար աստվածավախ ծնողների դաստիարակությունը, ծննդավայրի ս. Խաչ դպրեվանքի խնկաբույր ծեսերն ու աղոթքները, եվրոպական, ամերիկյան մի քանի համալսարանների ուսանողական տարիները և տասնյակի հասնող լեզուների խորությամբ տիրապետումը:

Խաժակ սրբազանի հիսունամյա կյանքը ծնունդ առավ հին աշխարհի հնագույն մեկ կենտրոնից՝ պատմական Հայաստանից, հասունացավ քրիստոնեական բազմադարյան օրրան Երուսաղեմում և հաստատվեց Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդի պաշտոնում: Սակայն Խաժակ սրբազանի նկարագրի հիմնական գույնը, գիծը աննահանջ հայրենասիրությունն է: Պարսամյան հոգևորականի հայրենասիրությունը լոկ զգացմունք չէ, այլ միտք և իմաստություն, ապրում ու աշխատանք: Նա հայրենիքը սիրում է՝ քաջ գիտակցելով անցյալի պանծալի մարտիրոսությունները, ընդվզումներն ու պայքարը, մտահոգող ներկան և վաղվա արշալույսը: Խաժակ սրբազանը հպարտությամբ է հետևել Ղարաբաղյան շարժմանը, կարեկցել իր ժողովրդի ծով տառապանքներին, միաժամանակ ոգևորվել արցախյան պատերազմի հաղթանակներով ու ոսկետառ նվաճումներով:

Խաժակ Պարսամյան հոգևորականը «Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին» նշանաբանով գիտական ու մշակութային ժողովներում հնչեցրեց հայոց արդար դատը, նախագահների, պաշտոնական ու պետական այրե-

րին հորդորեց ճանաչել հայոց Եղեռնը, տարբեր ամբիոններից բարձրացրեց Արցախի հարցի արդար լուծումը, ամեն տարի ապրիլի 24-ին իր հոտի զավակներին պատառնեցրով ու կարգախոսներով հանրահավաքների, երթերի մղեց, որպեսզի սենատորների ու կոնգրեսմենների, ինչպես նաև ամերիկայի ժողովրդի ուշադրությունը հրավիրի դարասկզբի ոճրագործությունը դատապարտելու:

Խաժակ սրբազանի հիսունամյա կյանքի երկրորդ կարևորագույն զարկերակը այլասիրությունն է, որի բյուրեղացած սիրո ծնունդն է բարեգործությունը: «Եկեղեցին հայրենիքի հետ... Եկեղեցին ժողովրդի համար», ահա այն կարգախոսը, որ սրբազանը ոչ միայն պատգամել է, այլև կենսագործել՝ գործունեության անկյունաքարը դարձնելով իր քենի հնարավորությունները ի սպաս դնել հայրենիքին և ժողովրդին: Այդպես, նա, երկրաշարժի բոթը լսելով, առաջիններից էր, որ եկավ հայրենիք, որպեսզի կարեկից լինի իր ժողովրդին, ուժ գտնի սրբելու նրա արցունքները և բոլոր հնարավոր միջոցներով օգնի դուրս գալու ծանր վիճակից:

Այս տարիների ընթացքում սրբազանը 180 միլիոն դոլարից ավելի միջոցներ է հայթայթել ու տրամադրել Հայաստանին: Հայրենիքն էլ չմոռացավ իր զավակին, նրա բազմաթիվ մշակութային, հասարակական, բարեգործական, ուսումնական աշխատանքների և ծրագրերի համար Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան, Երևանի պետական համալսարանը սրբազանին շնորհեցին պատվավոր դոկտորի կոչում:

Խաժակ սրբազանն անսահման հմտությամբ և նվիրումով առաջնորդում է Ամերիկայի Արևելյան քենը, իր հոտի զավակներին մատնացույց է անում մեր ժողովրդի արյամբ և արտասուքով խոնավացած և ապա մամուռած Միաժնաէջք Մայր Տաճարի սրբատաշ քարերը:

պատգամ տալիս ուսումնասիրել հայոց հարուստ մշակույթի մեծարժեք գանձերն ու նվաճումները: Թերևս այդ ճանապարհով կարողանա Միությունը փրկել ուժացման վտանգից: Պարտք է դնում նրանց խղճի վրա. սիրել հայրենի սրբազան հողը, Հայոց Եկեղեցին և անհրաժեշտության դեպքում՝ լինել անձնագոհ: Սրբազանի համար խորը վիշտ է, որ հայ ժողովրդի մի մեծ հատվածը քափառաշրջիկ կյանք ունի, որ շարունակվում է արտագաղթը. մարդիկ բախտ են փնտրում արտասահմանի տաքուկ, սակայն չջերմացնող անկյուններում: Խաժակ սրբազանը կմխիթարվի, հոգեկան հրճվանք կապրի այն ժամանակ, երբ մեր ժողովրդի ապագան խորհրդանշող արշալույսը մշտապես շողարձակի: Ազգին մատուցած Պարսամյան հոգևորականի ծառայությունները ծանրակշիռ են, որոնք հարստացնում են մեր միտքը, սիրտն ու հոգին և առավելագույն չափով գոտեպնդում:

Նա իրական կյանքի հոգևորական է, որից էլ սկիզբ է առնում նրա խոսքի, ասելիքի իրապատում ճշմարտությունը: Նա իր գործունեության ամբողջ ընթացքում հեռու մնաց հեշտ ճանապարհներից և աշխատեց հայտնաբերել ժամանակի գլխավոր իմաստը, հրամայականը և դժվարին մաքառումներով լծակից դառնալ ազգի բազում հոգսերին, դարձնել կանոն անկանոնությունը, ասել այն, ինչը նպաստում է հայոց հանրության առաջընթացին: Նա իր բարեկրթությամբ, համեստ պահվածքով, անսահման բարությանը լուսավորում է շրջապատը և խաղաղարար, հավասարակշռված նկարագրով իրեն հետ առնչվող մարդկանց կյանքը դարձնում քեթև ու հաճելի: Հայոց Եկեղեցին և մեր ազգը դեռևս շատ սպասելիքներ ունեն իր առաքինագարդ ու համեստ հոգևորականից, ինչպիսին Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն է, որի գոյությունն իսկ զարդարում է մեր անհանգիստ ժամանակը:

Բազմադարյան եկեղեցու հարուստ մշակույթից մեզ հասած ժառանգությունն ուսումնասիրելիս, բնական մի մղումով, մեր խոհերն ու ուշադրությունը կանգ են առնում քարոզներին, որոնք քրիստոնեական կրոնի ձևավորման վաղ ժամանակներում նպատակ են հետապնդել Քրիստոնեության վարդապետությունը՝ Նոր Ուխտը տարածել և հասցնել նորադարձներին: Բայց հետագա դարերում, գոնե Հայոց Եկեղեցու ծիրում քարոզը, Ավետարանը մեկնաբանելու նպատակին զուգահեռ, այլ խնդիրներ ևս արծարծելու միջոց է դարձել: Մեր իմաստուն հայրերի քարոզները կարդալով՝ մոռանում, վերանում են իրականությունից և թվում է, թե մտնում են մատուռ, տաճար և աչքերիդ կոպերի տակ թաքցնելով Աստվածամոր պատկերը՝ մոմի լույսի խորհրդից պայծառացած շնչում են «Հայր Մերը» ու տարվում ամբողջությամբ մաքրամաքուր խոհերով:

Նման զգացողության ապրումներ են համակում, երբ կարդում կամ լսում են Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի քարոզները: Բարեպաշտ Պարսամյանների որդին հանձն առավ հոգևորականի կոչումը, աստիճանաբար աճեց և անհագ ծարավով ըմպեց երկնային շնորհների բաժակը, գորացավ, ամբողջ կյանքը տքնեց և իր մեծ առաքելությունն ի կատար ածեց՝ խորին պատասխանատվությամբ ստանձնեց իր ժողովրդի մի հատվածի հովվությունը:

Խաժակ Պարսամյան եկեղեցականն ապրել է 1915 թվականի Եղեռնի կազմակերպած քաղաքականության հետևանքները, մղկտացել է մտավորականության մի ընտրագույն փաղանգի սպանողը, Արևմտահայաստանի և արևմտահայության վերածումը սփյուռքահայության, իսկ այդ ամենը և հավատացյալ ծնողների պատմութ-

յուններն անցնելով նրա հոգու միջով և հարստանալով նոր շերտերով ու զգացողություններով՝ իմաստավորում են հարազատ ժողովրդի անդոհալից կյանքն իր բոլոր կողմերով, որը նրա համար դարձավ կենսագրություն: Ուստի Խաժակ սրբազանն իր քարոզներում անդրադարձավ անցյալի ու նախնյաց փառքի հիշատակներին, վկայակոչեց անուններ ու գործեր, որոնք ազգ, լեզու, հայրենիք, եկեղեցի են կերտել (Մեսրոպ Մաշտոց, Մահակ Պարթև, Գրիգոր Լուսավորիչ, Տրդատ, Տիգրան Մեծ, Գարեգին Հովսեփյան...), խոսեց արյունոտ օրերի անցուդարձերից, գրեց զաղթականի ցուպը ձեռքը վերցրած այն քափառական սերնդի մասին, որն անտուն ու անօթևան դեգերում է Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և անդրօվկիանոսյան երկրների ճանապարհներին, սակայն չմոռացավ գրել իր ժողովրդի մեծագույն հարստության՝ հայրենիքի, հայոց լեզվի, հավատի և այն ամենի մասին, ինչը բորբոքում էր սփյուռքահայության հայրենաբաղձ զգացումները: Սրբազան հայրը չի կարողանում պաղարյունությամբ վերհիշել այն ավերներն ու կորուստները, որ պատճառել են թուրքերը. «Ողջակիզված հայությունը ոչ միայն գոհ է տվել իր անհամար լավագույն զավակներին, այլև շատ անգամ իսպառ ոչնչացվել են մահ նրա ստեղծած հոգևոր անգին զանձերը: Թշնամին անխնա կերպով հետևել է քանդելու և ոչնչացնելու հայն ու իր մշակույթը հիշեցնող որևէ հուշարձան»:

Անցյալն ու ներկան Խաժակ հոգևորականի ապրած իրականության անդրադարձումն են՝ պայծառ վերհուշով: Եվ նրա քարոզի ներշնչման ոգու գլխավոր գաղտնիքն այն է, որ նա ապրել է իր գրածների նյութի և երբեմնի ուրախ, ինչպես մահ հետագայի տխուր իրականությունը: Որքան անգամներ է նա իր հոտի զավակներին քարոզել. «Մայր Աթոռ ս. Էջմիածինը փրկության լաստ է ալեկոծությանց մեջ ծփացող Սփյուռքի հայության համար, լույս և ճանապարհ՝ մութի մեջ, անխորտա-

1069 - 2004

կելի ամբարտակ՝ ձուլման դեմ»։ Իր ամբողջ էությամբ նա սիրում ու պաշտում է հարազատ, չարքաշ ժողովրդին, մայր երկիր Հայաստանը, երկյուղածությամբ խոնարհվում աստվածակառույց ս. Էջմիածնի՝ իբրև Հայոց Սրբություն Սրբոցի առջև, մտքի զմայլելի պայծառությամբ ու ջերմությամբ բյուրեղացնում ու ամրապնդում ազգային-եկեղեցական միասնականության ոգին, իսկ այս ամենն արտացոլվում են նրա քարոզներում։

Խաժակ սրբազանն անտարբեր, կողքից պատմող չէ։ Ինչի և ում մասին էլ, որ խոսում է, սիրտ ու հոգի է դնում, հույզ ու զգացում, և մոտիկ թե հեռու անհատներ ու անձեր թանձրանում են նրա խոսքի մեջ ու կերպարներ դառնում, որ հետո երկար ժամանակ ուղեկցում են հավատացյալ ունկնդրին։

Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն ինքնավստահ հանդես է եկել Հայ Դատի, Արցախյան հարցի, թուրքերի կողմից Հայաստանի շրջափակման խնդրի վերաբերյալ, որոնց սրբազան հայրն անդրադարձել է ոչ թե իբրև ձևի, պատկերավոր արտահայտության համար, այլ նպատակ ունենալով հենց իրականությունը ցուցադրել։ Սրբազան հայրը, որի բարոյախոսության կողերսը՝ աշխատանքը, ազնվությունը, համեստությունն է, պայծառառես մտքով միանգամից ընկալում է անցյալը, ներկան և ապագան, որն օգնում է նրան ճանապարհորդել ժամանակի և տարածության միջև։ Սրբազանը՝ որպես ճշմարիտ քարոզիչ, ինչպես մեր մեծագույն նախնիները, առաջին հերթին փորձեց գտնել նոր ժամանակներում ապրող մարդկանց էության մեջ ձևավորվող, հասունացող այն ապրումներն ու խոհերը, փորձեց հայտնաբերել այն գլխավոր հոգեբանական վիճակները, հարաբերությունները և կենսական մտահոգությունները, որոնցով հայրենիքում, թե Սփյուռքում ապրում են իր հայրենակիցները։ Մարդիկ, որոնց կյանքն է նոր ու տարբեր և

կյանքի հանդեպ ունեցած պատկերացումներն ու մտածողության ձևը, ինչպես նաև ընկալման կերպը։

Խաժակ սրբազանն այն հոգևորականներից է, ովքեր ջանում են իրենց կյանքի փորձը, զգացածն ու տեսածը փոխարկել գործի։ Այդպես նա որոշակի կենսական ճշմարտություններ բերեց, որով կարողացավ նվաճել իր ժողովրդի սերը և փնտրված հոգևորականի համբավ վաստակել։

Խաժակ սրբազանն անկեղծություն, սալրում և ջերմություն է դնում իր խոսքի մեջ, որոնք ներգործում են ընթերցողի վրա ու ոգեղենացնում նրան։ Նա ամեն ինչ տեսնում է ժողովրդի աչքերով և ըստ էության՝ նա ինքը դառնում է ոչ միայն քարոզող, այլև ունկնդրող ու գրող։ Նա մնաց իր զգացմունքների ու ապրումների անադարտ քարզմանը, իսկ խոհականությունը նրա համար այլ բան չէ, քան էության վարար ու հորդուն դրսևորում։ Սրբազան հայրը մեծ մասամբ գրում է անսեթևեթ և անպաճույճ։ Բայց և այնպես նա իր նյութը կարողանում է հետաքրքիր դարձնել՝ ճարտարությամբ համեմելով այն նմանություններով, գրույցներով։

Սրբազան հայրը գիտության մարդ է։ Նրա քարոզներն ամենից առաջ ունեն իր ժամանակի համար գիտական, մասնավորապես պատմա-հասարակական արժեք։ Սրբազանի ապրումները տարբեր շողարձակումներով բեկվում են սրտի, մտքի, հիշողությունների բազմանիստ խորքերը։ Նա քաջ գիտի, որ ապրողների համար հարկավոր է հույսի պատվար, ուստի և ամեն տեսակ կորուստներից անհրաժեշտ է գոտեպնդել մարդկանց, հույս ու նեցուկ դառնալ, ջրդեղել «մնացորդացի» ապրելու կամքը։

Խաժակ սրբազանի քարոզները հազենում են թանձր ապրումներով, բառերը, պատկերները, իրենց նյութական ընդգծված իմաստներով հանդերձ, ձեռք են բերում մեղեդու թեթևություն և մեղեդու պես ունենում ներազդե-

լու ուժ, քանզի մարդկության հավատի ապրումների զգացողությունն ու այդ զգացողության վերարտադրությունը Խաժակ սրբազանի բանախոսությունում դրսևորվում է հեքիաթային պատկերավորությամբ, մի առանձնահատուկ ու բազմազան ներկայանակով, որը պայմանավորված է արտաքին աշխարհի անմիջական արտածումով և այն զարմացած աչքերով հայտնաբերելու ու նվիրելու իր ունկնդիր-ընթերցողին:

Մի մանրամասն ևս արժե ընդգծել: Սրբազան քարոզիչի կենդանի խոսքը, ձայնի, գույնի, շեշտի նրբին ելևէջները խոսքն ավելի են զարդարում և ոգեղինացնում: Խաժակ Պարսամյան հոգևորականի քարոզները կարդալը մի առանձին հաճույք է, բայց ունկնդրել նրա կենդանի խոսքը՝ գերագույն վայելք: Նրա համար ապրել՝ նշանակում է գործել և այրվել: Ու սրբազանը, մեղրամոմի նման այրվելով, լուսավորում ու ջերմացնում է իր շրջապատը:

ՊԱՏՄԱԹՅՈՒՆԸ ՍՐԲԱԳՈՐԾՈՒՄ Է ԼԱՎ ՈՒ ՎԱՏ ԳՈՐԾԵՐԸ

Անջնջելի ու հավիտենական հիշատակներ թողնելով՝ մեզանից հեռացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը, մեր ազգին ժառանգելով իր շնչով հասունացած, պատրաստված, խոստումնալից, իրենց կոչման բարձրության վրա գտնվող հոգևորականների սերունդ, որոնք պատրաստ են մաքուր սրտով ու խղճով ծառայելու սեփական ժողովրդին: Նրանք այսօրվա հոգևոր մշակներն են: Ասես այս փաստի վավերացումն է գրող Սասուն Վարդանյանի խոսքը, որով նա ժամանակին դի-

մել է Վեհափառ հայրապետին. «Դուք անխոնջ, բարի մշակներ՝ տքնումի, Ձեզ վատնումի սովոր, ու մենք լույ շիթը՝ Ձեր լուսե հավատի»:

Վեհափառի հույսերը և երազներն իրականացնողներից մեկն է լույսի պես պայծառ, Ավետարանի շնչով և հայրենիքի սիրով առցված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համեստ մշակներից մեկը՝ Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, որը, հազիվ վեղար առած, փութաց թափանցել խնկաբույր հոգևոր աշխարհը՝ կերտելով տեսիլքներ, երկնելով երազներ, մեկնելով խորհուրդը չարչարված Աստծո անմահության և հասկանալով խորախորհուրդ այն ճշմարտությունը, որ, անգամ հատվելով, կհարատևի հայ ժողովուրդը:

Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահի ընտրության ժամանակ սրբազան հայրը չառաջադրեց իր թեկնածությունը, որը մեկ անգամ ևս վկայում է նրա համեստ ու ազնիվ նկարագիրը: Գերաշնորհ արքեպիսկոպոս Պարսամյանի (ավագանի անունը՝ Սարգիս) ապրած ժամանակաշրջանն ու միջավայրը նրա մանկության ու պատանեկության առաջին իսկ տարիներից բնական մի հակում, մշտավառ սեր ու տրամադրություն է առաջացրել նրա մեջ դեպի եկեղեցին:

Ծնված լինելով ազգային ավանդույթներով ու հավատալիքներով հարուստ պատմական Հայաստանի Արարկիր շրջանում և նախնական կրթություն ստանալով Ստամբուլի ս. Մեսրոպ նախակրթարանի մեջ, ապա սովորելով հայաբույր ս. Խաչ դպրեվանքի կամարների տակ, լույս, ջերմություն, հավատքի կայծ ստանալով՝ նրա մատաղ հոգում ցոլանում է վառ երազներով լեցուն հոգևորականը, որը մեր ժողովրդի համար պետք է դառնար, երջանկահիշատակ Վեհափառ հայրապետի խոսքերով իսկ ասած, «լուսատու ճրագ», «համեմիչ աղ»:

Ուսումնաստենչ երիտասարդը, ամբողջապես կլանված լինելով Հայոց Եկեղեցու արարչագործ լույսով, այն դարձրել է պաշտամունք ու հսկումի խորան: Նա, անտարակույս, չէր կարող սահմանափակվել ձեռք բերած գիտելիքներով, ուստի իր ուսումը շարունակում է աշխարհի հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ամփոփ ներկայացվում է ոչ լրիվ ցանկն այն կրթական ուսումնական օջախների, որոնց կամարների տակ գիտելիքներ և հասունություն է ձեռք բերել սրբազան հայրը. Նյու Յորքի սուրբ Վլադիմիր աստվածաբանական վարժարան, Նյու Յորքի Ջեներալ Թեյլորի դը սեմինարիա, որտեղ ստացել է աստվածաբանության մագիստրոսի աստիճան, Մինիսոթայի սուրբ Ջանչ համալսարան, Օբսֆորդի համալսարանի արևելագիտության բաժին, Հռոմի Գրիգորյան համալսարան, որտեղ ստացել է Արևելյան Քրիստոնեության ուսման մագիստրոսի աստիճան: 1988 թվականին, Արևելյան ծիսագիտության մասնագետ պրոֆեսոր Ռապր Թաֆֆիի ղեկավարությամբ, պատրաստել է «Հայոց Եկեղեցույ Պատարագին եւ ժամերգութեան ծագումն ու զարգացումը՝ համաձայն Ասորական եւ Բիզանդական աղբյուրներու» դոկտորականը:

Նա, խորը գիտելիքներ ձեռք բերելով հայագիտական և կրոնական առարկաների մեջ, քաջ գիտակցում է օտար լեզուների իմացության անհրաժեշտությունը, ուսումնասիրում և տիրապետում է իտալերեն, անգլերեն, բուրբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, ասորերեն լեզուներին: Պատրաստված, մարզված և օտար լեզուների մեջ հմտացած՝ վստահությամբ իր կյանքն ու ճակատագիրը, գործն ու հույսերը կապում է իր եկեղեցու և ժողովրդի կյանքին ու հույսերին՝ ջերմացնելու և լուսավորելու մարդկանց հոգիներն ու սրտերը:

Սրբազանի գիտելիքների խորիմացությունը հայտնի է Միլյուրքում և Հայաստանում պատարագի ժամանակ

հնչող պատգամ-քարոզներից, երբեմն-երբեմն քերթերում ու ամսագրերում հրապարակված հարցազրույցներից:

Սրբազանն իր մտավոր և հոգեկան բարեմասնություններով ու կարողություններով, ինչպես նաև եկեղեցաշեն, հայրենամկեր գործունեությամբ արդեն իսկ հաստատել է իրեն: Այդ ամենի վառ ապացույցն է Ամերիկայի Արևելյան թեմում ծավալված հայապահպանությանը նախատող խանդավառ գործունեությունը, որտեղ գործում են տարբեր գրասենյակներ՝ հայ կրթական և մշակութային, կրոնական դաստիարակության, երիտասարդաց ծառայության, ընկերային ծառայության, «Գրիգոր և Կլարա Ջոհրապ» տեղեկատվական, Տիկնանց կենտրոնական միության, երգչախմբային, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրը և գործունեության շրջանակը: Ի դեպ, արժանին մատուցելով արդարությանը, պետք է շեշտել, որ հայրենիքում և այլուր ձևավորված եկեղեցական թեմերը հետագայում ընդօրինակեցին և իրենք նույնպես կազմակերպեցին իրենց թեմերում երգչախմբեր, հայ եկեղեցու երիտասարդաց միություններ, հար և նման տարբեր բաժիններ:

Սրբազան հոր հիմնադրած գրասենյակների ծրագրած և կատարած աշխատանքների միջոցով է Նյու Յորքի, Վաշինգտոնի և Ամերիկայի շատ զարգացած քաղաքների հայությունը կապվում եկեղեցու հետ: Այս կառույցների աշխատանքի շնորհիվ է ապահովվում առաջնորդարանի բնականոն կյանքը: Միլյուրքում նրա նկատմամբ սերը և հարգանքը դրսևորվեց 1994 թվականի ապրիլին՝ երկրորդ անգամ ընտրվելով Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ:

Դժվար ու փշոտ կյանքի ճանապարհ անցած ազգի գավակը միշտ եղել է իր ժողովրդի հետ, բաժանել նրա ուրախություններն ու տխրությունները: Երկրաշարժից

հետո, մտահոգված ժողովրդի ճակատագրով, Երևանում հիմնում է ՀՕՖ-ի գրասենյակը, որպեսզի նեցուկ, սատար կանգնի նեղյալներին ու կարոտյալներին, որ կյանքում լույս լինի, իսկ լքված սրտերում՝ հույսի նշույլներ, որ վշտոտ հառաչանքներից հետո մի քիչ ծիծաղի թարմաշունչ ցող իջնի նրանց դեմքերին: Սրբազանն իր ուշադրությունը կենտրոնացնում է այնտեղ, որտեղ նվազ հոգատարություն կա, ուստի Ամերիկայի Արևելյան թեմը երկրաշարժից հետո իր անմիջական տրամադրության տակ վերցրեց Ստեփանավան քաղաքը, ուր կառուցվել ու շահագործման են հանձնվել բնակելի շենքեր, դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, բոլորն էլ հազեցած նորագույն սարքավորումներով:

Այսօր էլ շարունակվում է օգնությունը տեղի բնակչությանը, որը սրբազան հոր անմիջական ուշադրության կենտրոնում է: Մեծ մասամբ Սփյուռքի հայոց թեմերը, ինչպես նաև արտասահմանյան մյուս կազմակերպություններն իրենց աշխատանքները և օգնությունը կազմակերպում են հիմնականում Երևանում և նրա շրջակայքում: Մինչդեռ Խաժակ սրբազանը ձեռք է մեկնում տեսադաշտից դուրս մնացած շրջաններին: Այսպես, ՀՕՖ-ը, Խաժակ սրբազանի նախագահությամբ, իր աշխատանքները կազմակերպում է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի մյուս շրջաններում, նա իր հովանավորության տակ է վերցրել Սյունյաց թեմը, որն ընդգրկում է Գորիսի, Վայքի սահմանամերձ շրջանները: Սրբազանը ինքնամոռացումի հասնող նվիրումով անում է կարելին և նույնիսկ անկարելին, որպեսզի Արցախի ժողովուրդը պատվով դուրս գա ստեղծված ծանր վիճակից:

Մի ակնարկի մեջ անհնարին է ներկայացնել Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի՝ իբրև հոգևորականի և քաղաքացու դիմանկարը, սակայն կուզենայի խոսքս ավարտել իր իսկ բառերով. «Մենք մեզ չպետք է խնայենք

հայրենիքը պահելու սրբազան գործում, այլապես պատմությունը չի խնայի մեզ: Պատմությունն ամենամեծ դատավորն է, որ անաչառ է և սրբագործում է լավ ու վատ գործերը»:

23 փետրվարի, 1995թ.

«ԲԱԶՈՒՄԵՆ ԿՈՇԵՑԵԱԼԵ, ՍԱԿԱՒ ԵՆ ԸՆՏՐԵԱԼԵ»

Ամեն անգամ տոնախմբություններին, հանդիսություններին, կարևոր թե անցողիկ միջոցառումների ժամանակ երախտագիտությամբ, հուզումով ու հպարտությամբ ոգեկոչում ենք ազգային ու եկեղեցական այն գործիչներին, որոնք խոր հետք են թողել ժողովրդի մտավոր, մշակութային, քաղաքական ու կրոնական համայնապատկերում: Պատմությունը մեզ է ավանդել բազում անուններ, որոնց եկեղեցին «սուրբ» է կոչել, իսկ ազգը՝ «հերոս»: Ջորապետների, իշխանների, հովվապետների կողքին ապրել և ծառայել են նաև հասարակ նվիրյալներ, անվարձ մշակներ, քանգի բանակը՝ հոգևոր թե աշխարհիկ իմաստով, շարքային զինվորով է բանակ: Ահավասիկ մերօրյա «հոգևոր զինվորների» մի փաղանգ է անում ու բարձրանում, որ պիտի վաղը լրացնի ազգի պատմության գրվելիք էջերը: Այդ նվիրյալ «մշակներից» ու շարքային «զինվորներից» մեկի մասին ուզում ենք հիշել, որ հակառակ երիտասարդ տարիքին, արդեն հասցրել է բարի գործերով զարդարել իրեն և փառավորել Տիրոջ անունը, քանգի ամենայն լավը աստվածային Սուրբ Հոգու շնորհ է...

Պետք է ենթադրել, որ Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը վայելում է Սուրբ Հոգու շնորհը, քանզի նրա եկեղեցանմեր, ազգօգուտ ծրագրերը իրականանում են մի զարմանալի թեթևությամբ: Հոգևոր ծառայության որ շրջանն էլ ուսումնասիրելու լինենք՝ սարկավագ, արեղա, վարդապետ թե եպիսկոպոս, ակնհայտ է նրա անխառն հայրենասիրությունը և եկեղեցասիրությունը, իսկ վերջին ութ տարիների նոր ու բազմապահանջ առաջնորդական պաշտոնում նա իրեն դրսևորել է հոտը հովվելու, համայնքը առաջնորդելու անուրանալի կարողություն՝ ամենօրյա հոգեհարազատ գործերին զուգակցելով քարոզչությունն ու «բարի լուրի» ավետումը:

Տարիների տքնանքը, ազգանմեր ու եկեղեցաշեն գործունեությունը սրբազանին ճանաչում են բերել, ստեղծել պատկառանք, մեծ հեղինակություն՝ որպես պատրաստված, խոհուն և նվիրյալ եկեղեցականի: Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը հավաքագրում է թեմի ազնիվ ու հայրենասեր հայորդիներին և նրանց օժանդակությամբ բարձրացնում եկեղեցու նշանակությունը, աշխուժացնում ազգային-եկեղեցական կյանքը: Թեմի հավատացյալներն էլ վստահելով՝ սիրով, երախտագիտությամբ համախմբվում են իրենց հոգևոր հովվի շուրջը՝ հենարան ու նեցուկ հանդիսանալով նրան:

Խաժակ սրբազանը գլխավորում է նաև Ամերիկայի Արևելյան թեմի մշակութային կյանքը՝ իր հոտի ծոցում ուժեղացնելով ազգային-եկեղեցական միասնականության ոգին, հատկապես նոր սերնդի շրջանում ստեղծելով հետաքրքրություն դեպի հայ մշակույթը և արժարժեքով բոցավառ սեր դեպի հայրենիքը: Առաջնորդության տարիներին նա միայն իր հոտի կողմից չէ, որ ընդունվել, սիրվել և հարգվել է: Սրբազան հայրը քրիստոնեական եղբայրության սրտագին կապ է հաստատել կաթոլիկ եկեղեցու նվիրապետության և հոգևորականության, ինչ-

պես նաև Ամերիկայի կառավարության և պետական քարճրաստիճան հեղինակավոր գործիչների հետ՝ որպես իր ապրած երկրի լիիրավ և նվիրված քաղաքացի: Իբրև արդյունք այդ սերտ հարաբերությունների՝ Ամերիկայի Արևելյան թեմն աննախընթաց հեղինակություն է վայելում ամերիկյան կառավարության, եկեղեցու և ժողովրդի կողմից: Սրբազան հայրը պարբերաբար մեծ շուրջով կազմակերպում է միջոցառումներ, հանդեսներ՝ ոգեկոչելով հայ ժողովրդի պատմության արյունոտ էջերը և պանծացնելով ուրախ, տոնական հորելյանները, միաժամանակ հանդես գալով բանախոսություններով ու դասախոսություններով:

Առաջնորդության տարիներին ավելի է սերտանում կապը Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայրենիքի հետ, հատկապես, երբ հայրենիքը հայտնվեց երկրաշարժի, պատերազմական դաժան պայմանների մեջ և անկախացման դժվար ճանապարհին: Այս տարիներին իր համայնքի հավատավոր զավակներն ապրում են հայրենիքի սիրով և Մայր Աթոռից ճառագող Լուսավորչի հավատի լույսով:

Երբ թերթում ես սրբազանի կողմից հիմնված ՀՕՖ-ի գրասենյակի գործունեության տեղեկագիրը, հիանում ես կատարած այն աշխատանքների համար, որոնց կարիքն ունեցել է եկեղեցին, ժողովուրդը և հայրենի կառավարությունը: Այսօր էլ, հուրախություն արցախահայության, ՀՕՖ-ի գրասենյակի մասնաճյուղ բացվեց Արցախում, որը նույն ծրագրերն է իրականացնելու տասնամյակներով հայրենիքից օտարված երկրամասում: Պատահական չէ, որ առաջնորդության տարիներին նա արժանացել է իր հոտի բոլոր զավակների, ինչպես նաև երջանկահիշատակ Վազգեն վեհափառի, այնպես էլ Գարեգին Ա կաթողիկոսի սիրուն ու վստահությանը, քանզի նրա մեջ ազգի վեհապետները նկատեցին քրիստոնեական եկեղեցու նվիրյալ առաջնորդներից մեկին: Նա բո-

վանդակ կյանքում չհեռացավ իր սկզբնական ուխտից, որը հայ ժողովրդի և եկեղեցու հանդեպ սերն էր և նախնիների ավանդներին՝ հավատարմությունը:

Սրբազան հայրը իր վրա դրված ծանր ու դժվարին լուծը Աստծո օգնությամբ շարունակում է կրել հավատարմորեն, արդյունավորությամբ և մեծ ձեռնահասությամբ: Նրա կատարած ազգանվեր և եկեղեցաշեն գործի լավագույն գնահատականը օրերս կայացած ընտրություններն էին, երբ համայնքի հավատացյալները երրորդ անգամ իրենց վստահության քվեն տվեցին սրբազան հորը, որպեսզի նա իր գիտելիքների իմացությամբ, գիտական պատրաստվածությամբ, ազնվական կեցվածքով ու բարեկրթությամբ, անկաշառ սիրով, անբասիր վարքով շարունակի առաջ տանել մշակութային, եկեղեցական կյանքը հեռավոր ավերում: Տեղին է հիշել ավետարանական պատգամը. «Բազում են կոչեցեալք, սակաւ են ընտրեալք»: Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը «սակաւ ընտրեալների» հույին է պատկանում:

ԽՆԿԻ ՆՄԱՆ ԱՅՐՎՈՂ ԿՅԱՆՔ

Ժամանակին Մոնտիոնի «Առաքիության մրցանակը» տրվում էր նրանց, որոնց գործերն ու բարքերը պիտի համապատասխանեին ավետարանական պատգամներին. «Մեր մեջ մի մարդ կայ, որ այնպես չէ, ինչպես միսները – հեզ է եւ ողորմած»: Հավանաբար, ԵՊՀ-ի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանն այս մտածումներով Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի մեջ տեսել և գտել է մի հատկանիշ, որ նրան առանձնացնում է իր ժամանակակից-

ներից: Դա նրա երկյուղած վերաբերմունքն է ավետարանական հավիտենական և անկորնչելի արժեքներին և իր հավատի մաքրամաքուր կայլակումը, որ անբաժան է սրբազան հորից: Այդ համոզումով, ինչպես նաև սրբազան հոր անձի նկատմամբ ունեցած երկյուղածության ու հարգանքի համար պարոն Մարտիրոսյանը նրան շնորհում է ԵՊՀ-ի բարեգործի պատվավոր դոկտորի վկայական:

Նրա ներքին, հոգեկան խորունկ ապրումներին ամենից ավելի հարազատ ու համահունչ է բարությունն ու բարեգործությունը: Նա իր բախտավորությունը գտնում է ողորմածության ու մերձավորի նկատմամբ տաժած սիրո մեջ: Սրբազան հայրն ըմբռնել է, որ ավետարանական բարեգործությունն ու զբասրտությունը ոչ թե թելադրվող պահանջմունք են, այլ՝ ազգի հարատևման խնդիր: Այդ մտահոգություններն էին, որ ազգային շահերով ապրող Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին բերեցին ԵՊՀ-ը՝ տեղում ծանոթանալու և գնահատելու իրավիճակը: Երկու գիտնականների՝ սրբազան հոր և ԵՊՀ-ի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի մտերիմ փոխհարաբերություններն ու ջերմ բարեկամությունը նպաստեցին, որ մանրամասնորեն մշակվի և հաստատվի մի ծրագիր՝ գիտաուսումնական այդ խոշոր հաստատության նյութական պակասը հոգալու համար: Սրբազանը ինքնամոռացումի հասնող նվիրումով անում է անկարելին, որպեսզի ԵՊՀ-ի անապահով, ուսումնատենչ, շնորհալի երեխաները կարողանան շարունակել իրենց ուսումը: Այդ մտահոգությամբ բացվեց ուսանողական-բարեգործական ճաշարան, սահմանվեց կրթաթոշակ, վերանորոգվեց և կահավորվեց ԵՊՀ-ի «Եղիշե Չարենցի» անվան դահլիճը:

Խաժակ սրբազանն ամենախոնարհ սարկավազությունից մինչև առաջնորդական արոռ ճանապարհն անցել է մի նշանաբանով. «Վանքի օջախը չմարի», ինչպես

հորդորել էր ժամանակին Գարեգին Հովսեփյան կաթողիկոսը: «Հոգևորականին վայել չեն երկնչել, տկարանալ: Պարտավոր ենք սիրել մեր ազգը՝ ինչպես կսիրենք հարազատ մայրը, եկեղեցին՝ ինչպես կսիրենք մեր սեփական տունը և ս. Էջմիածինը, ինչպես կսիրենք մեր հայրենական ժառանգությունը»:

Այդ ճանապարհին 20-ամյա հայրենասեր հոգևորականը շրջել է Հայաստանի գավառներում, փնտրել գտել է իր լեզուն, ինքնությունը կորցրած հարյուրից ավելի երեխաներ, բերել Երուսաղեմի դպրեվանք, որտեղ նրանք, սնվելով, հասունանալով մայր եկեղեցու ջերմ ու տաք ծոցում, հետագայում դարձել են Հայոց Եկեղեցու հավատի սյուները:

Լույսին և գիտությանը փարված՝ ուսումնաստենչ հոգևորականը Երուսաղեմի և Երևանի մատենադարաններում էջ առ էջ թերթել է մագաղաթե մատյանները, սեպագրերից երևան հանել հայ ժողովրդին վերաբերող մշակութային արժեքներ, որոնց ուսումնասիրություններն օգնեցին ըմբռնելու ազգի ոգին, որն ուղեկցել է նրան՝ դառնալով բարության, հայրենասիրության վսեմ գաղափարներ: Ժողովրդի հարազատ զավակի, նույնքան հարազատ հոգևորական գործչի մտահոգություններից մեկն էլ եղել է դառն ճակատագրի բերումով մեր կորած հայկական մասունքները, արժեքավոր մատյաններն ու մագաղաթները, սրբությունները գտնել և տուն փոխադրել: Այսօր արդեն տասնյակի հասնող եզակի մանուշակալի իրենց հանգրվանն են գտել Երևանի Մատենադարանում, Ազգային քանդարանում ու գրադարանում, Մայր Աթոռ ս. Էջմիածնում:

Երկրաշարժից հետո, մտահոգված ժողովրդի ճակատագրով, Երևանում հիմնում է ՀՕՖ-ի գրասենյակը, որն իր աշխատանքները կազմակերպում է Երևանում, Հայաստանի սահմանամերձ շրջաններում, Արցախում: Բարի հոգու տեր հոգևորականը չի մոռացել նաև ճակա-

տագրի ու հարազատների գոսացած խղճի առաջ դատալարտված մանկատան, ծերանոցի բնակիչներին: Սրբազան հայրն ամեն անգամ այցելելիս բարությանը, բարեկրթությանը լույս և հավատ է շնորհում նրանց և հեռանալիս կարողանում է իր չասած խոսքը լռելայն ասել:

Դժվար է մի ակնարկի մեջ մեկ առ մեկ թվարկել ու գնահատել վերջին տասը տարիներին Հայաստանում սրբազան հոր նախաձեռնությամբ իրականացրած մեծ ու փոքր ծրագրերը: Թերևս այդ ամենի ամենաբարձր գնահատականը մայիսի 14-ին ԵՊՀ-ում կազմակերպված միջոցառումն էր: Ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը, պրոֆեսորադասախոսական կազմը, բազմաթիվ ուսանողներ հավաքվել էին սյունազարդ դահլիճում՝ իրենց ողջույնի, շնորհակալության, հիացմունքի, նվիրվածության ջերմ խոսքը նվիրելու սրբազան հորը:

Հատկապես տպավորիչ էր Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Շահեն արքեպիսկոպոս Աճեմյանի խոսքը. «Ես ուրախ եմ, որ առիթ ունեցա մասնակցելու այս շնորհանդեսին: Խաժակ սրբազանը, ինչպես նաև ՀՕՖ-ի նախագահ Վիգեն սրբազանը իմ սաներն են: Ես նրանց դաստիարակն ու հոգևոր հայրն եմ: Խաժակ սրբազանը սնվել, կրթություն և հասակ է առել Վարդանանց և Ղևոնդյանց շնչով ու ոգով, որ նշանակում է հայրենիք և եկեղեցի: Իսկ այդ երկու իմաստներին փարված հոգևորականը չէր կարող ուրիշ կերպ դրսևորվել»:

Իսկ պարոն Մարտիրոսյանը, ծնողի հոգատարությամբ, գուրգուրանքով լցված յուրաքանչյուր ուսանողի, դասախոսի, աշխատողի նկատմամբ, գոհ ու շնորհակալ է, որ ԵՊՀ-ն ապրում և շնչում է լիարյուն կյանքով, որտեղ իր բաժինն ունի նաև Խաժակ սրբազանը:

Հուզված է նաև Խաժակ սրբազանը, որի հոգում նստած է մարդը, հոգևորականը, գիտնականը: Հայրենասեր երանաշնորհ Գարեգին Հովսեփյանի հետևյալ խոստովանությունը՝ «Ես աղքատ, հասարակ գյուղացու

զավակ եմ, բայց եթե այսօր եմ՝ ինչ-որ եմ, պարտական եմ միայն իմ Ազգին, իմ Ժողովրդին, իմ Եկեղեցուն», լիովին վերաբերում է Խաժակ սրբազանին: Նա բացառիկ դեմք է մեր իրականության նորագույն եկեղեցու պատմության մեջ, բացառիկ իր խառնվածքով ու անհատականությամբ, պատրաստվածությամբ և վաստակով, ուրեմն բացառիկ պիտի լինի որքան իր նկարագրի, նույնքան էլ իր գործունեության մեջ: Նա բացառիկ եղավ, որովհետև բացառիկ են ժամանակները, դեպքերը, որոնց մեջ աչքերը բացեց և հասունացավ, ինչպես նաև բացառիկ էին նրանք, որոնց խառնվեց սրբազան հայրը:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Վերջերս Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին շնորհեց պատվավոր դոկտորի կոչում: Արդարախոհ լինենք՝ ըմբռնելու և գնահատելու համար Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյան անհատականության դերն ու նշանակությունը, պետք է ծանոթ լինել գոնե նրա հակիրճ կենսագրությանը, առանց որի հնարավոր չէ ընդգրկել նրա գործունեության ընդարձակ դաշտը և մտավոր հորիզոնի սահմանը: Խաժակ սրբազանի մեջ վառ է ազգային ոգին՝ ներշնչված պատմական անցյալից (ծնվել է Արաբիկիում), լեզվից (նախնական կրթությունը ստացել է Ստամբուլի նախակրթարանի մեջ), կրոնից (ս. Խաչ դպրեվանքի կամարների ներքո հնչող խնկաբույր աղոթքներից), ավանդույթից ու մշակույթից (Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության հարուստ ժառանգությունից):

գությունից): Նախնիների ոգեղեն զանգեղով հարստացած երիտասարդը՝ գիտակցելով, որ իր մատուցած ծառայությունը ազգի և եկեղեցու բարեկարգության ու առաջադիմության գործում օգտակար պետք է լինի, ներշնչված Հայոց Եկեղեցու լուսապայծառ հայրերի խոհ ու խոսքից, խորունկ հավատով ձեռնադրվում է կուսակրոն քահանա. համոզումով և գիտակից որոշումով եկավ իր երիտասարդական թարմ կորովով ավելացնելու հայ եկեղեցու սպասավորության կանչված միաբան եղբայրների թիվը: Չեռք բերածով չբավարարվելով՝ շարունակում է ուսանել ու ինքնաշխատությամբ խորանալ ստվածաբանական ու հայագիտական գիտելիքների ոլորտում:

Սրբազանը, 1988 թվականին Արևելյան ծիսագիտության մասնագետ պրոֆեսոր Թաֆթիի ղեկավարությամբ պատրաստելով իր «Հայոց Եկեղեցույ պատարագին եւ ժամերգության ծագումն ու զարգացումը՝ համաձայն ասորական եւ քիզանդական աղբիւրներու» դոկտորական թեզը, ինչպես նաև «խժբժանքներին և խեղաթյուրումներին» պատասխանելու և հայ եկեղեցու ճշմարիտ նկարագիրը տալու համար քափառեց հայ մատենագրության բավիղներում, ուսումնասիրեց հայոց շարականները, եկեղեցական ժողովների կանոնները, երկյուղածությամբ հետևեց անցյալի մեծանուն ստվածաբան հայրերին (Ներսես Մեծ, Օճնեցի, Ընդհալի, Տաթևացի...):

Բազում կոչումների ու տիտղոսների բարձրակետը եղավ ԵՊՀ-ի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանի կողմից սրբազանին շնորհված «Մեծ բարերարի» կոչումը: Այդ պատվաբեր տիտղոսը նա վաստակել է իրավամբ, քանզի նրա քահանայական ծառայության երեսուն տարիները եղել են նվիրում ազգին, եկեղեցուն և հայրենիքին: Պատահական չէ, որ Ամերիկայում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանը ժամանակին սրբազանի մասին խոսելիս բոլոր առաքինությունները

րի կողքին հատկապես նշում էր. «Սրբազանի գործունեության նպատակները, առանցքը և ուղղվածությունը միայն Հայաստանի, հայրենի ժողովրդի համար է»:

Նա իր փրկարար ձեռքը մեկնել է հատկապես սահմանամերձ գոտիներում ապրող հայրենակիցներին, Արցախի հեռավոր շրջաններին: Երբ դժվար է եղել որևէ կարծիք բանաձևել հայ ժողովրդի ապագայի մասին, սրբազանը, իր իսկ լավատեսությամբ, հույս ու հավատ է ներշնչել հուսալքված հոգիներին: Սրբազանի սեպուհ պարտքն է եղել ամենուր պաշտպանել Հայ Դատը: Եվ որպեսզի ավելի վստահ ու համարձակ կարողանա ներկայացնել իր ժողովրդի դատը, տիրապետել է իտալերենին, անգլերենին, բուրբերենին, ֆրանսերենին, գերմաներենին, հունարենին, ասորերենին: Այդպես, նա գիտա-ժողովներում, առանձին պաշտոնյաների ու կրոնական գործիչների հետ երկխոսությամբ բացատրում, համոզում է հայ ժողովրդի անցյալն ու ներկան, որի առանցքը դարաբաղյան կնճիռն է:

Անկարելի է չնշել սրբազան հոր առաքինի ու մաքրակենցաղ վարքն ու բարքը Հայոց Եկեղեցուն և ազգային արժեքներին անմնացորդ նվիրվածությունը: Սրբազանը չի վազել փառքի ետևից, այլ փառքն է հետևել նրան: Ահավասիկ, ժամանակին ինչպես է գնահատել սրբազանին Մատենադարանի տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Սեն Արևշատյանը. «Ես շատ առիթներ եմ ունեցել հանդիպելու նրան և ամեն անգամ բաժանվելիս հեռացել եմ տպավորված: Խաժակ սրբազանը իր զբաղեցրած պաշտոնին արժանի փայլուն նկարագիր ունեցող հոգևորական է և լավ գիտնական»: Լռել, խոկալ և աղոթել՝ այս երեք բառերի մեջ են խտանում արաբկիրցի մանուկի, ս. Խաչ դպրեվանքի պատանու և այսօրվա սրբազան առաջնորդի բնավորության հիմնական գծերը: Մի առիթով Մատենադարանի գիտնական Գևորգ Տեր-Վարդանյանը նկատել է. «Խաժակ սրբազանը Մատենադարանի վաղեմի

բարեկամն է, որտեղ նա զբաղվում էր Հայոց Եկեղեցու ծխական մատյանների քննության, նրանց նախնական տեսքի վերականգնման հարցերով, որը մեր եկեղեցագիտության կարևորագույն արժեքներից մեկն է: Սրբազանը այն հայագետ-գիտնականներից է, որ ամեն բառը գրելուց առաջ նախապես մտածում է, զուսպ է, խոհուն»: Իսկ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, Խաժակ սրբազանին ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու առիթով, գոհունակությամբ ընդգծում է. «Ամենաբարձր կարծիքը ունեմ՝ առանձնացնելով մարդը, գիտնականը, հոգևորականը, գիտակ մարդը: Իմ հանդիպումների ժամանակ ես զգացել եմ նրա գուրգուրալից վերաբերմունքը դեպի գիտությունը և մեր ակադեմիան: Խաժակ սրբազանը հայագիտության ճանաչված ու գնահատված անձնավորություններից է: Շատերին է հայտնի նրա մանրակրկիտ և հիմնավոր ուսումնասիրությունները հին և միջնադարյան Հայաստանի պատմության ու բանասիրության վերաբերյալ: Վստահ եմ, որ հայագիտությունը զալիքում էլ պիտի հարստանա նոր շերտերով, որը Պարսամյան եկեղեցականի մատուցած ծառայությունը պիտի լինի»:

«ԱՅՍՕՐ Է ՕՐ, ՉՈՐ ԱՐԱՐ ՏԵՐ»

Քսանհինգ տարի առաջ, աշնանային մի գեղեցիկ օր Հայոց Եկեղեցու սուրբ սեղանի առջև ծունկ դրեց և ուխտ արեց՝ անշեղորեն և հաստատուն քայլերով ընթանալ մեր նախնիների կողմից գծված այն լուսավոր ճանապարհով, որ կոչվում է ծառայություն նախ՝ Աստծո սե-

ղանին, ապա՝ մեր եկեղեցուն և, բնականաբար, հավատացյալ ժողովրդին: Տաղանդով, նկարագրով ու զարգացմամբ ազգին պատիվ բերող կուսակրոն քահանա Խաժակ Պարսամյանը, քսանհինգ տարի առաջ հավերժական հոգևոր ծառայության երդում տալով, կրոնական նվիրումով հավատաց Հայոց Եկեղեցու եռամեծ վարդապետների դավանանքին, հայ հոգևոր եկեղեցական պայծառ երախտավորներին, սրբացրեց իր նախնիների ավանդությունը՝ Սփյուռքում ս. Մեսրոպ Մաշտոցի զինվորներին զինելով Այբ, Բեն, Գիմ անպարտելի զենքով: Քսանհինգ տարի շարունակ Հայոց Եկեղեցու արարչագործ լույսով վառված՝ կրոնաբույր մթնոլորտում, մշտապես չբավարարվելով ձեռք բերած գիտելիքներով, անընդմեջ սովորեց: Շնորհիվ շուրջ տասը կրթական ուսումնական օջախների՝ նրա հոգու և մտքի անդաստանի մեջ ցանցելով բարի սերմեր՝ օգնել են նաև գիտության միջոցով ճանաչել տիեզերքի զաղտնիքները, Աստծուն:

Նրա ավետարանաշունչ համեստությունը նկատել էր կինոռեժիսորիչ Ֆրունզե Դովլաթյանը. «Համեստության տիպար է, բնավորությամբ՝ հեզահամբույր, զարգացած, գիտակից բարձրաստիճան հոգևորական՝ կոչմամբ և իր կյանքով՝ ամբողջովին նվիրված եկեղեցուն»: Նա, իր բարությամբ, սրտացավությամբ չկարողանալով մերժել նեղյալին, կարոտյալին, մերժել է պարոն Դովլաթյանին, որը բազմիցս առաջարկել էր նրա գործունեության մասին ֆիլմ նկարահանել՝ պատճառաբանելով. «Ես անում եմ այն, ինչ որ պարտավոր է անել յուրաքանչյուր հայ մարդ, քանզի մեր հայրերը երազում էին՝ արդյո՞ք պիտի գա այն օրը, որ հայի համերաշխության ծիրանի գոտին կամար կապի Մայր Հայաստանի և Սփյուռքի միջև: Ահավասիկ, պահն է բաղձալին»:

Քսանհինգ տարի նա անշահախնդիր, եռանդուն մասնակցել է մեր ժողովրդի եկեղեցական-հոգևոր, հասարակական-քաղաքական կյանքին, հոգևոր մշակույթի

ստեղծման և զարգացման շնորհակալ, աստվածահաճո ձեռնարկներին: Օգնել և հովանավորել է ինչպես Սփյուռքում, այնպես էլ հայրենիքում իր եկեղեցական և աշխարհիկ գրող եղբայրներին՝ դժվարին պայմաններում գրքերի հրատարակման գործում: Կազմակերպել է ցուցահանդեսներ, բարեգործական համերգներ, որոնք նպաստել են ոչ միայն մեր արվեստագետների ճանաչողությանը, այլև ստացված հասույթը տրամադրել փախստականների ընչազուրկ վիճակը քեթևացնելու գործին: Նա անդուլ աշխատանքով, սիրով ու վճռակամությամբ, խոսքով, գործով ընդդիմադրել է չարիք ու ատելություն սերմանել փորձող բոլոր մութ ուժերին և քարոզել միայն ճշմարիտ եղբայրություն, խաղաղություն, բարեկամություն, հայրենասիրություն: Սրբազանը ծառայության բոլոր տարիներին ապրել է իր ժողովրդի կյանքով, նրա նվիրական հույսերով, ձգտումներով, հաղթանակներով և մտահոգություններով: Լսելով 1988 թվականի դեկտեմբերի 7-ի գույժը՝ անմիջապես կազմակերպեց Ամերիկայի Արևելյան թեմում և մասնաճյուղը՝ Երևանում, ՀՕՖ-ի գրասենյակը, որն առ այսօր նյութական, բարոյական, քարոզչական բոլոր միջոցներով ձեռք է մեկնում կարիքավորներին, անապահով ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին: Այսօր արդեն տասը տարին բոլորած ՀՕՖ-ի գրասենյակի կազմակերպած շինարարական, բարեգործական, կրթական ծրագրերի համար նախատեսված գումարներն անցնում են 100 միլիոն դոլարից:

Իսկ այսօր նա ի սփյուռս աշխարհի ցրված հայերին հորդորում է, թե այժմ նրանք հայրենիք ունեն, և այդ հայրենիքն ազատ է ու անկախ, որ խաղաղ արեգակն ու պայծառ աստղերը լուսավորում են նրա անդորր ցերեկներն ու գիշերները, և ցանկացած հայի համար բացված են ազատ գործունեության ուղիներ: Հայրենիքը կանչում է բոլոր հայերին՝ անկախ դավանանքի պատկանելությ-

յունից: Եվ վատահեցնում, որ այսօր հայի արցունքի մեջ միայն արևի շողեր են անդրադարձվում: Որպեսզի այսօրվա ամերիկահայ երիտասարդն ավելի մոտ կանգնած լինի հայրենիքին ու իր արմատներին, սրբազանն ամեն տարի կազմակերպում է մասնագետ երիտասարդների (քժիշկ, ինժեներ, տնտեսագետ, փաստաբան) ուխտագնացություն դեպի Հայաստան, որոնք վերադառնում են՝ հոգիների մեջ նշխարի նման ամփոփելով հայրենի երկրի սրբազան հիշատակները:

Լրացավ եկեղեցական-հասարակական, ճեմարանական-համալսարանական, մատենագիտական ասպարեզներում իրեն հաստատած Հայաստանյայց եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ծննդյան 45-ամյակը և քահանայական ծառայության 25-ամյակը, որոնց ընթացքում հանձին սրբազանի՝ մեր եկեղեցին ունեցավ իր գոհաբերվող, շինարար, կոչման և պարտքի խորին գիտակցությամբ իր հավատի և ավանդությունների պատվանդանի վրա ամուր կանգնած, ձեռքում բռնած խաչը և հայոց պատմության գիրքը, արդարամիտ, հայրենասեր, իր լավատես փիլիսոփայությամբ, վաղվա նկատմամբ վառ հույսերով ճշմարիտ հոգևորականը: Քսանհինգ տարի հետո, վերանորոգված հոգեկան ուժերով, խանդավառված նոր ծրագրերով, պայծառացած նոր տեսիլքներով և լույսով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի կենարար գործությամբ, հավատում է հայ ժողովրդի տոկուն ուժերին՝ ի շինություն և ի ծաղկումը Մայր հայրենիքի և սուրբ եկեղեցու, պատրաստվում է արժանավայել մասնակցել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ՄԱՍԱՐԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ

Հայերը Հյուսիսային Ամերիկայում հաստատվել են 17-րդ դարի առաջին տասնամյակներից: Այստեղ եկած առաջին հայի անունը՝ Ջոն Մարտին (Մարտին Արմինիան), հիշատակված է 1618 թվականին, իսկ 1834 թվականին պատանի Խաչատուր Ոսկանյանը հաստատվում է Նյու Յորքում՝ ուսում ստանալու նպատակով, և հետագայում դառնում ամերիկյան գրականության նշանավոր դեմքերից մեկը: Հայտնի է նաև, որ 1653-54 թվականներին Ամերիկայի Վերջինիա նահանգի նահանգապետի հրավերով պատմական Հայաստանից այնտեղ են մեկնել երկու շերամապահ վարպետներ՝ շերամապահությունը զարգացնելու նպատակով: 1895-1905 թվականներին ամերիկահայ գաղութը ավելի ստվարացավ՝ հասնելով հիսուն հազարի: 1920 թվականին հայերի թիվը Ամերիկայի Միացյալ Նահանգներում կազմում էր 100 հազար, որը գնալով ստվարացավ՝ մեծ մասամբ Միջին Արևելքի երկրներում հայության համար ստեղծված անբարենպաստ և անապահով կյանքի հետևանքով: Մակայն որքան էլ որ քաղաքական, տնտեսական լավ պայմանների մեջ գտնվի Միջուրքի հայությունը, հայապահպանության ամենակենսական ազդակներն են կրոնը, լեզուն, մշակույթը և ազգային ինքնագիտակցության ոգին: Այդ անհրաժեշտությամբ էր, որ դեռևս 1891 թվականին Վանքերում կառուցվեց ԱՄՆ-ում հայկական ս. Փրկիչ եկեղեցին, իսկ 1898 թվականին Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցին պաշտոնապես առաջնորդություն ստացավ և ճանաչվեց Խրիմյան Հայրիկ կաթողիկո-

սի կողմից: Այսօր ԱՄՆ-ում և Կանադայում ապրում են մեկ միլիոնից ավելի հայեր, որոնցից շատերը փախյալ են՝ գրականության, արվեստի, գիտության, առևտրի և կառավարության մեջ բարձր պաշտոններ զբաղեցնելով: Հայ բնակչության զլխավոր կենտրոններն են Կալիֆոռնիան, Ֆլորիդան, Մասաչուսեթսը, Միչիգանը, Միգուրին, Նյու Ջրզը, Օհայոն, Փենսիլվանիան, Թեքսաս և Վիրջինիա նահանգները:

ԱՄՆ-ի հավատացյալ հայերի մեծամասնությունը պատկանում է Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, որը բաղկացած է երկու թեմերից: Արևելյանը, որը պաշտոնապես ճանաչվում է իբրև Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու թեմ, մեծագույն թեմն է Հայաստանից դուրս: Նրա իրավասության տակ են վերը թվարկված բոլոր նահանգները՝ բացի Կալիֆոռնիայից և Արիզոնից: Արևմտյան թեմը, որի իրավասության տակ են մտնում այս երկու նահանգները, կազմվել է 1928 թվականին: Արևելյան թեմում գոյություն ունի չորս 59 կազմակերպված ծուխ:

Ամերիկայի Հայաստանյայց Եկեղեցու Արևելյան թեմի առաջնորդն է Խաժակ եպիսկոպոս Պարսամյանը, որը պատրաստված և փորձառու հոգևորական է: Նա ծնվել է 1951 թվականին Արաբկիրում: 13 տարեկան հասակում կրոնական կրթություն է ստացել Ստամբուլի ս. Խաչ դպրեվանքում: 1968 թվականին մեկնել է Երուսաղեմ՝ ուսումը շարունակելու: 1971 թվականին ձեռնադրվել է արքեպիսկոպոս, ապա՝ երկու տարի հետո ստացել վարդապետական աստիճան: Երուսաղեմում ուսանելու տարիներին Խաժակ Պարսամյան հոգևորականը ստանձնել է դպրեվանքի փոխտեսչի պարտականությունները և զբաղվել ուսուցչությամբ: Այդ տարիներին նա կարևոր դեր է ունեցել հարյուր մանուկների Թուրքիայից Երուսաղեմ բերելու, ինչպես նաև նրանց դաստիարակությանը և կրթությանը զբաղվելու գործում:

Ծառայել է որպես հոգևոր հովիվ Ջաֆալի, Հայֆայի և Ռամեյի հայ համայնքներում, ստեղծել է հայերենի դասընթացների ծրագրեր: 1975-76 թվականներին եղել է ամենապատիվ Շնորհք պատրիարքի անձնական քարտուղարը: Խաժակ Պարսամյան եկեղեցականը ուսումը շարունակել է Միացյալ Նահանգներում և Եվրոպայում: Աստվածաբանության պատկավորի տիտղոս է ստացել Աստվածաբանական ընդհանուր ընծայարանից, ապա շարունակել է Մեննեպոլսի ս. Հովհաննես համալսարանում: 1982 թվականին Հռոմի Գրիգորյան համալսարանից ստացել է պատկավորի տիտղոս: 1988 թվականին գերագույն գնահատականներով պաշտպանել է դոկտորականը «Հայոց Ժամագրքի ծագումն ու զարգացումը՝ համեմատած բյուզանդական աղբյուրների հետ» թեմայի շուրջ: Նա դասավանդել է Միացյալ Նահանգներում, Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում և Հայաստանում: Ուսումնասիրություններ է կատարել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում, Վենետիկի Մխիթարյան հաստատությունում և Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանում: Հրատարակել է հոդվածներ կրթական և գիտական պարբերականներում: Անդամ է Ծիսագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության, ինչպես նաև ս. Ներսես Աստվածաբանական ակադեմիայի ուսուցչական կազմի: 1984-90 թվականներին նա եղել է ընդհանուր փոխանորդ Ամերիկայի Արևելյան թեմի և վարել է էքումենիկ զբաղեցման տնօրենի պաշտոնը: 1990 թվականին, թեմական 88-րդ պատգամավորական ժողովի հաստատմամբ, որը գումարվել է Մեսրոպ Նահանգի Ուստր քաղաքում, ընտրվել է Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի առաջնորդ, իսկ հոկտեմբերի 7-ին ստացել է Ն.Ս. Օծություն S.S. Վազգեն Առաջինի կողմից եպիսկոպոսական ձեռնադրություն՝ Էջմիածնի Մայր տաճարում:

Սրբազան հոր նստավայրն է Նյու Յորք քաղաքը, ուր կառուցվել է առաջնորդարան և Մայր տաճար ս. Վարդան եկեղեցին, որի օծումը կատարել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ եպիսկոպոս Պարսամյանը գտնվում էր հայրենիքում: Օգտվելով բարենպաստ առիթից՝ նրան խնդրեցինք պատասխանել մի քանի հարցերի:

– Սրբազան, հայը պետականորեն առաջին քրիստոնյա ազգը լինելով՝ իր փրկությունը փնտրել և գտել է եկեղեցու, դպրոցների և մշակույթի մեջ: Ի՞նչ խնդիրներ է իր առջև դրել եկեղեցին հայապահպանության հարցում Միջուրքում:

– Ազգի գոյությունը ապահովված է այնքան ժամանակ, քանի դեռ վառ է ազգային ոգին ժողովրդի մեջ, որը ներշնչվում է իր պատմական անցյալից, կրոնից, լեզվից, ավանդույթներից ու մշակույթից: Այդ հրամայականով է, որ առաջնորդարանում գործում են կրոնական ուսուցման բաժանմունք, հայ դպրոցների կրթական կենտրոն, ԱՄՆ-ի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու երիտասարդության կազմակերպություն, Ընկերային ծառայությունների բաժանմունք, Գրիգոր և Կլարա Ջոհրապտեղեկատվության կենտրոն, Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի մատենադարան, գրավաճառանոց, լուսավորական հայ դպրոց, որի կառույցի ներսում գտնվում է Հայկ և Ալիս Գավաթճյան սրահը, որտեղ տեղի են ունենում գիտաժողովներ և հանդիպումներ, հավաքներ: 1940 թվականից Նյու Յորքում է գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչությունը, որը գլխավորում է բարեգործականի հիմնադիր Ալեք Մանուկյանի դուստր Լուիզ-Սիմոն Մանուկյանը: Եկեղեցուն կից գործում են կիրակնօրյա և ամենօրյա դպրոցներ:

– 1988 թվականին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժին արձագանքեցին համայն աշխարհի բարի մարդիկ: Ինչպիսի՞նչ օգնություն ցուցաբերեց Ամերիկայի Արևելյան թեմը:

– Հայ Եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմը անմիջապես արձագանքեց Հայաստանում տեղի ունեցած ողբերգական երկրաշարժին: Առաջին օրերին մենք առաքեցինք դեղորայք, բժշկական գործիքներ, սննդամթերք, հագուստ, որոնց ընդհանուր գումարը կազմում է վեց միլիոն դոլար: Բացի օդային առաքումներից՝ բեռներ ուղարկեցինք նաև նավով, որը բերում էր բնապարկեր, խաղալիքներ, կոշիկ, ուտեստ, օճառ և այլ անհրաժեշտ իրեր: Թեմի առաջնորդ գերաշնորհ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի նախաձեռնությամբ Հայաստան գործուղվեց բժիշկների մի խումբ՝ վիրաբույժ Ռիչարդ Ֆրեյզ, պլաստիկ վիրաբույժ Տիգրան Գուլյան, վերականգնության մասնագետ Սթենլի Մայերզ և ոսկրաբան վիրաբույժ Հովհաննես Ներսեսյան: Նրանց օգնությամբ կազմվեց գրավոր տեղեկագիր, որի մեջ նշվում էր այն խիստ անհրաժեշտ դեղորայքային, բժշկական սարքավորումների պահանջը, որը հարկավոր է աղետի գոտում: Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա կաթողիկոսի առաջարկությամբ հարց դրվեց առաջնորդարանի հավաքած դրամական նվիրատվությունները հատկացնել Ստեփանավան քաղաքում բնակարանակենցաղային, բուժական, կրթական համալիր վերաշինելու: Եինարարության նախանյութերը հավաքվել են ԱՄՆ-ից, իսկ միութենական արտադրություններից օգտագործում են միայն պողպատ և շաղախ: Ավանի կառուցման ծրագրում նախատեսվել են երկհարկանի բնակարաններ, հիվանդանոց-ատամնաբուժարան, մանկաձուլ և մանկապարտեզ, դպրոց, գրադարան, խանութներ, խաղահրապարակներ, հավաքավայրեր: Կառույցների շինարարական արվեստը տարբերվում է Հայաստանում ընդունված

ձևերից, տները կառուցելիս օգտագործվում են մետաղ-
յա կապերով ամրացված փայտեր, որոնք ամուր են և
ընդունակ դիմակայելու ստորգետնյա ավերիչ ուժերին:
Բոլոր կառույցները կահավորվելու են ամերիկյան վեր-
ջին տեխնիկայի սարքավորումներով, իսկ ամերիկյան
գրադարանների ընկերությունը ստանձնել է կառուցվե-
լիք գրադարանին նվիրել մի ամբողջ գրադարան:

– Այսօր Հայաստանում նոր կառավարություն է, դե-
կավարում են երիտասարդ, առողջ, ողջամիտ և ազգա-
յին մտածողությամբ օժտված ուժեր: Ինչպիսի՞նք է Ձեր
վերաբերմունքը Հայաստանի նոր կացության առիթով:

– 70 տարիների ընթացքում ինչպիսի իրադարձու-
թյուններ էլ տեղի ունեցան Խորհրդային Միությունում, ե-
կեղեցին հավատարիմ մնաց դարերով ժառանգած իր
մշակույթին, արվեստին և հայեցի պահեց իր հավատա-
վոր ժողովրդին ինչպես Մայր հայրենիքում, այնպես էլ
Սփյուռքում: Այսօր նոր ուժեր են կառավարում, և, ծանո-
թանալով նրանց ծրագրերին և գործունեությանը, հան-
րապետության անկախության հռչակագրին, վստահա-
բար կարող եմ ասել, որ հայ ժողովրդի համար գալու է
նոր լուսավոր ապագա՝ Արցախ աշխարհով, Նախիջևա-
նով և մեր պատմական հողերով: Եվ պատահական չէր,
որ Ամերիկայի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու
Արևելյան թեմը ողջունեց ու իր շնորհավորանքները
հղեց Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահ
Լևոն Տեր-Պետրոսյանին ու նրա կառավարությանը: Իմ
տպավորությամբ՝ նա այն անհատն է, որը ժողովրդի
հետ միասին հավատարիմ կմնա պապերից ժառանգած
ավանդներին: Կմաղթեմ, որ արդարանա վստահու-
թյունս:

– Ի՞նչ նոր ծրագրեր ունեք առաջիկայում:

– Եթե սկզբնական շրջանում գերխնդիրը աղետի գո-
տին վերականգնելն էր, ապա դրան ավելացավ Արցախ
աշխարհը՝ իր արդար դատով և իրավունքով: Մենք Ամե-

րիկայում պետք է անենք կարելին, որպեսզի Արցախի
հայ բնակչությանը չթողնենք ելուզակների առջև անօգ-
նական, ինչպես կատարվեց 1915 թվականին Հայաս-
տանի մեծագույն մասում: Այսօր ավելացավ մի նոր
հարց ևս: Հայաստանի Հանրապետությունը արտաքին
սփյուռքի աջակցության խիստ կարիք ունի, և ես, գալով
Հայաստան ու հանդիպելով նրա կառավարության ան-
դամների հետ, Ամերիկայում ավելի ճշգրիտ կարող եմ
գործել, որպեսզի հնարավորության սահմաններում մեր
ավանդը ներդրվի հայ ժողովրդի և Հայաստանի նոր,
արդար ձեռնարկումների գործին: Բնականաբար,
ծնվում են նոր ծրագրեր, որոնք պետք է մշակվեն և
կյանքի կոչվեն: Հուսամ, որ մեր ձեռնարկումները կօգ-
նեն փոքր-ինչ թեթևացնելու մեր ժողովրդի հոգսերը:

7 հունվարի 1991թ.

«ՍԱՂԹՈՒՄԵՄ, ՈՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒՏ ՀԱՍՏԱՏՎԻ»

1988 թվականին Հայաստանում տեղի ունեցած երկ-
րաշարժից անմիջապես հետո Նյու Յորքում Հայ Առա-
քելական Եկեղեցու թեմական խորհուրդը հիմնեց «Հա-
յաստանի վերաշինության թեմական հիմնադրամ» կազ-
մակերպությունը, որի նպատակն է վերականգնման գոր-
ծունեություն ծավալել աղետի գոտում: Թեմական հիմ-
նադրամի նախագահն է Ամերիկայի Արևելյան թեմի ա-
ռաջնորդ Խաթակ եպիսկոպոս Պարսամյանը, փոխնա-
խագահն է Էդուարդ Հովսեփյանը, անդամներն են Հով-
նանյան ընկերության ատենապետ Գևորգ Հովնանյանը,

Վիճակները Այդուբեյկյանը, միջազգային համալսարանների հրատարակչության ատենապետ Մարթին Ազարյանը: Մեզ հետաքրքրող հարցերին պատասխանում է Մայր Աթոռ ս. Էջմիածնում հյուրընկալված Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ եպիսկոպոս Պարսամյանը:

– Սրբազան հայր, սեփական աչքերով տեսաք ու զգացիք այսօրվա դժվարությունները: Դուք, որպես հոգևոր հովիվ, կարողանո՞ւմ եք օգտակար լինել ձեր ժողովրդին:

– Իրապես, այս ծանր օրերին հայ ժողովրդի վիճակը մեզ շատ է մտահոգում: Մեր բաղձանքն է, որ մեր հայրենի ժողովուրդը Հայաստանի հողի վրա ապրի լավագույն պայմաններում, ուստի մենք, որպես ուխտավոր հոգևորականներ, ապրող և ծառայող արտասահմանում, ամեն գնով օգտակար պետք է լինենք հայրենի ժողովրդին, հայրենի պետությանը, Մայր Աթոռ ս. Էջմիածնին, հայ եկեղեցուն: Ամերիկայում մենք սրտի ցավով և կսկիծով ենք հետևում Հայաստանից եկող ամեն մի տխուր լուրի, իսկ երբ եկա ու տեսա, թե ինչպես գեղատեսիլ Երևանի ծառերը հարկադրաբար կտրել են, որպեսզի ժողովուրդը, վառելիքի միջոց օգտագործելով, ձմռանը ցրտից չառչի, սիրտս ճմլվեց, խորությամբ զգացի մեր ժողովրդի տառապանքը: 1988 թվականի աղետաբեր օրերից սկսած մինչև այսօր մեր ժողովուրդը ծանր օրեր է ապրում, իսկ մենք չենք կարող դիտողի դերում լինել, փորձում ենք օգտակար լինել՝ թեմի ծանրությունը թեթևացնելու համար: Երկրաշարժից հետո մեծ թվով երեխաներ որբացան, որոնց գումարվեցին Արցախում ազատագրական կռիվ մղած և հայրենիքի համար զոհ դարձած ֆիդայիների զավակները: Մենք պարտավոր ենք տեղ կանգնել ծնողագուրկ երեխաներին, տնօրինել նրանց ճակատագիրը: Այդ մտահոգությամբ Արարատյան թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ ծրագիր մշակվեց՝ եկեղեցու հովանու

ներքո՝ մեզ վրա վերցնել հոգևոր ծնողի պարտականությունը, հոգ տանել ծնողագուրկ երեխաներին, որպեսզի նրանք խնամքից զրկված չլինեն:

– Անշուշտ, աստվածահաճո գործ եք կատարում, սակայն դուք վստա՞հ եք, որ Ձեր բարի նպատակը չի ծախողվի, և մատաղ հոգիները հուսախաբ չեն լինի:

– Եթե նպատակը բարի է, և գործը՝ արդար, անպատճառ պետք է հաջողությամբ պսակվի, իսկ մենք պիտի ջանանք, որպեսզի մեր ծնողագուրկ երեխաները գտնեն իրենց հոգևոր ծնողներին Ամերիկայի մեջ: Յուրաքանչյուր հոգևոր ծնող պարտավոր է հոգ տանել երեխայի համար մինչև 18 տարին լրանալը, իսկ երեխան ամեն ամիս պետք է ստանա իր բաժին գումարը:

– Սրբազան, ի՞նչ հանգամանքներում ստեղծվեց «Հայաստանի վերաշինության թեմական հիմնադրամ» կազմակերպությունը և ո՞րն է նրա խնդիրը:

– Երկու ամիս առաջ մի խումբ ամերիկահայ տարբեր մասնագիտության տեր հայրերիցների հետ այցելեցինք Հայաստան, շրջեցինք երկրաշարժից ավերված շրջանները և, տեղում ճշգրտելով աղետի պատճառած վնասների ու անհրաժեշտ օգնության չափը, կազմեցինք ծրագիր, որի իրականացման համար ստեղծվեց «Հայաստանի վերաշինության թեմական հիմնադրամ» կազմակերպությունը: Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Ա-ի հետ խորհրդակցելուց հետո որոշվեց հիմնադրամի տրամադրության տակ եղած գումարները ներդնել Ստեփանավան քաղաքում, 30 հեկտար տարածության վրա կառուցել բնակելի ավան-քաղամաս, որը կունենա իր հիվանդանոցը, մանկապարտեզը, դպրոցը, գրադարանը, խանութները, մարզասրահը և կենցաղի համար անհրաժեշտ կառույցները: «Հայաստանի վերաշինության թեմական հիմնադրամը» մշակել է եռակողմ ծրագիր, որն ընդգրկում է բժշկական, պարենային, շինարարական, մարդասիրական օգնություն:

— Ինչպե՞ս են կազմակերպվում և ընթանում շինարարական աշխատանքները:

— Թերևս, այսօր կարելի է ասել, որ, չնայած Հայաստանի Հանրապետության համար ստեղծված ներկա ծանր կացությանը, շինարարական աշխատանքները լավ ու արդյունավետ են կազմակերպվում: Կարևոր է նաև այն, որ կազմակերպությունը ձեռնարկել է տարբեր մասնագիտությունների գծով հայ բժիշկների և շինարարների վերապատրաստում Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Արդեն 15 բժիշկներ և բուժքույրեր վերապատրաստվել են երիկամների, սրտանոթային համակարգի, մանկական, հոգեբանական, քաղցկեղի, ակնաբուժության, նյարդաբանության, վերակազմության մասնագիտությունների գծով: Ամերիկյան գիտնականները և բժիշկները իրենց մասնագիտական փորձն ու գիտելիքներն են փոխանցում հայ մասնագետներին, որոնք ազնիվ առաքելությամբ պարտավոր են ծառայել ազգին: Հայաստան են ուղարկվել նաև անհրաժեշտ քանակությամբ սննդամթերք, հագուստ, դեղորայք, 10 էլեկտրատաղրիչներ: Մեր նպատակն է նաև Երևանի բժշկական կենտրոնական գրադարանը հարստացնել ժամանակակից բժշկական պարբերականներով, որոնք հնարավորություն կտան հայ առողջապահության աշխատողներին և բժիշկներին՝ ծանոթանալու ներկայիս գիտական նվաճումներին: Հիմնադրամի միջոցներով Ամերիկայում կվերապատրաստվեն նաև հայ արվեստագետներ, գիտնականներ:

— Մրբազան հայր, ի՞նչ կմաղթեիք մեր ժողովրդին, քանզի հոգևորականի շուրթերից հնչող մաղթանքը աղոթք է՝ հղած իր հավատացյալ հոտին:

— Այս դժվարին օրերին միակ իմ մաղթանքս է, որ Աստված համբերություն տա մեր ժողովրդին: Արտասահմանում մենք գոյատևում ենք շնորհիվ հայրենիքի շնչի, շնորհիվ այստեղ տառապող և տոկացող ժո-

ղովրդի: Պետք է խոստովանեմ, որ ներկայիս դժվարությունները, բաղդատած մախկինում կրած դժվարությունների հետ, ոչինչ են: Հիշենք՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո ինչպիսի տառապանքներ, զրկանքներ ու հալածանքներ ունեցանք, բայց չհուսահատվեցինք, շատերը Սիբիր գնացին և չվերադարձան: Ունեցանք աստվածային համբերություն՝ այդ ամենը տանելու համար: Այսօր հայ ժողովրդի համար շատ կարևոր է, որպեսզի խաղաղություն տիրի ինչպես Հայաստանի սահմանամերձ գոտիներում, այնպես էլ Արցախում: Մաղթեմ, որ խաղաղությունը շուտ հաստատվի մեր ժողովրդի համար: Պատերազմի ավարտը կնպաստի, որ մեր ժողովուրդը զբաղվի խաղաղ աշխատանքով և կարգի բերի իր տնտեսությունը:

20 հունվարի 1991թ.

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՊՐԵԼ ԻՐ ՏԱՆԸ

20-րդ դարի սկիզբը դաժան եղավ հայ ժողովրդի համար: 1915-ը արյունոտ քվական էր, երբ Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, օրը ցերեկով, բուրբերը մորթոտում էին աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, որն իր քրիստոնյա մշակույթով, լեզվով, արվեստով և գրականությամբ, իր ազատատենչ ու լուսաբաղձ հոգու ձգտումներով քիչ վաստակ չունի քաղաքակիրթ մարդկության համայնապատկերում: Ինչ հայկական էր ու գեղեցիկ, ինչ ստեղծվել էր հայ սերունդների սուրբ հավատով ու հանճարով,

քրտինքով ու արյունով, այդ բոլորի վրայով անցավ վայրագության, ցեղասպանության, ավերումի ալիքը: 20-րդ դարի վերջին կրկին երկունքի մեջ է այս փոքրիկ հողակտորը: Ամեն կողմ դարձյալ արյուն, կոտորած, մահ, բայց և ապրելու վճռականություն: Այսպիսի մտորումներով հարցազրույց վարեցինք Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ եպիսկոպոս Պարսամյանի հետ:

– Սրբազան, Դուք բազմիցս եղել եք Հայաստանում և ամեն անգամ բերել եք հոգեկան, բարոյական և նյութական օգնություն հայ ժողովրդին: Ո՞րն է այս այցելության նպատակը:

– Ինչպես գիտեք, ի դժբախտություն համայն մարդկության, Երկիր մոլորակի վրա պարբերաբար տեղի են ունենում տարերային աղետներ, և աշխարհի բարի մարդիկ ձեռք են մեկնում՝ գորավիզ կանգնելու աղետից տուժած շրջաններին: Հայաստանի աղետից, որի պատճառած ավերները և զոհերը աշխարհը չէր տեսել առ այսօր և, Աստված մի արասցե, որ տեսնի, անցել է երեք տարի: Բարեգործական միությունների տրամադրության տակ եղած գումարները ծախսվում են նոր աղետների վերացման համար: Հայաստանի ավերված շրջանները վերականգնված չեն, ավելին, բնակչության որոշ մասը երրորդ ձմեռն է անցկացնում վրաններում: Խորհրդակցելով Ամերիկայի մեջ գործող Աշխարհի եկեղեցիների բարեգործական ծառայության նախագահի հետ՝ խնդրեցի, որ նրանց ներկայացուցիչը այցելի Հայաստան և տեղում որոշի հնարավոր օգնության չափը՝ մեկ անգամ ևս ձեռք մեկնելով հայ ժողովրդին: Այդ նպատակով ինձ հետ ընկերակցում է Աղետների օգնության հանձնախմբի անդամ պարոն Գուստավ Բյուրրը: Նրա հետ շրջեցինք աղետի գոտու գրեթե բոլոր բնակատեղիներում, մանրամասն ուսումնասիրեցինք առկա վիճակը: Ամերիկա վերադառնալուց հետո կներկայացվի բացատրագիր, որին

համապատասխան կկազմվեն հատկացնելիք օգնության ծավալը:

– Այսօր մեծ չափերի է հասնում արտագաղթը, որը մեր ժողովրդի համար միշտ էլ ցավալի է եղել, իսկ այսպիսի ծանր ու վճռական պահերին այն հավասարագոր է դավաճանության: Յուրաքանչյուր հայ մարդ պարտավոր է ապրել իր տանը: Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը այս երևույթի նկատմամբ:

– Սփյուռքի հայության ազգային կյանքը ապրեցնելը զոհողություններ է պահանջում: Սփյուռքի հայը նման է ծովից դուրս նետած ձկան: Ձկնագետները ինչ էլ որ անեն, շատ-շատ կարող են երկարել նրա կյանքը միայն արհեստական միջոցներով: Ամերիկահայ գաղութը տնտեսապես ամենաբարգավաճ, ամենագոհաբերող, ամենաաղետկրատական գաղութն է: Ցավոք, նա էլ չի կարողանում խուսափել արտագաղթի և ներգաղթի տարություններից: Հիշենք պատմության հեռավոր անցյալում Լեհաստանի բարգավաճ ու կենսունակ գաղութը: Ուներ մինչև իսկ առանձնաշնորհումներ, որոնք, դժբախտաբար, բավարար չեղան կորուստից փրկելու համար: Անկարելի է չիիշել առասպելականորեն հարուստ հնդկահայ գաղութը, որը մոտ անցյալում տիրում էր Ծայրագույն արևելքի առևտրական կենտրոններին և տվել է ազգային մեծ բարերարներ, որոնք նպաստեցին հայի կրթական և մշակութային վերելքին: Դժբախտաբար, այսօր այն նույնպես դարձել է անցյալի պատմություն: Նույնը կարելի է ասել նաև Լիբանանի հրաշալի հայ գաղութի մասին: Վստահաբար պետք է ասեն, որ հայ ազգի սպազան Արարատի, Արագածի փեշերի տակ է, և մի օր այնտեղից պիտի ծագի կորուսյալ հայրենիքի ազատության վաղվա արշալույսը: Բայց մեկ բան այժմ որոշ է՝ Հայաստանի Հանրապետությունը թեպետ նյութապես և քաղաքականապես աննպաստ պայմանների մեջ է,

կուշտ է, քե անոթի, կշարունակի իր կրթական, ճարտարապետական, մշակութային վերելքը՝ շնորհիվ հայրենասեր, նվիրյալ զավակների: Կուզենայի կրկնել Ձեր միտքը՝ յուրաքանչյուր հայ մարդ պարտավոր է ապրել իր տանը, իր հայրենիքում:

– Մփյուռքի հայկական շրջանակներում ձևավորված օտար աղանդների դասը նկատի ունենալով՝ ինչ կարող եք ասել հայրենիքում աշխուժացած օտարամուտ կրոնական հոսանքների մասին:

– Մարդ էակը վտանգի պահին ապավինում է երկնային օգնության: Հայը, իբրև պետականորեն աշխարհի առաջին քրիստոնյա ազգ, իր փրկությունը փնտրել է եկեղեցու, դպրոցների և մշակույթի մեջ: Եվ եթե չլինեին այս երեք գործոնները, այսօր չէր պահպանվի սփյուռքահայությունը: Մփյուռքում հայտնի են մի շարք օտար կրոնական աղանդներ: Պետք է նկատի ունենալ, որ Վեցետիկի սուրբ Ղազարի կաթոլիկ հայերը ժամանակին ձևավորվել են քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով այն հայրենասեր հայ կրոնական գործիչների կողմից, որոնք զրկված էին հայրենիքում առաքելական եկեղեցու հովանիի ներքո ազգի համար օգտակար գործունեություն ծավալել: Այս առումով կարելի է որոշ չափով նրանց գոյության հետ հաշտվել՝ քեկուզ նկատի ունենալով սուրբ Ղազար կղզու հայ համայնքի գլխավոր ու մշակութային ծանրակշիռ վաստակը, բայց դա ամենևին չի արդարացնում հայ եկեղեցու այսօրվա պառակտման անմիտ փորձերը: Այսօր հայ եկեղեցին և հայոց պետականությունը ձեռք ձեռքի ազգային քաղաքականություն են վարում: Եվ բոլոր այն օտարամուտ աղանդները, որոնք հայ եկեղեցուց և հայ ժողովրդից դուրս նոր համայնքներ են կազմակերպում, կարելի է համարձակ ասել, որ նրանք լրացնում են մեր թշնամիների շարքերը, որովհետև ապազգային գաղափարներով

վարակված հայ մարդն արդեն հայ չէ: Կաթոլիկը, ավետարանականը, բողոքականը, կրիշնայականը հոտ է, նախիր, որը չունի ազգային պատկանելություն, ազգային մտահոգություն և ազգային երազանք և չի ծառայում իր հայրենիքին:

– Ո՞րն է հայ ժողովրդի գոյության խորախորհուրդ իմաստը:

– Մ.ք.ա. 6-րդ դարի երրայեցի նշանավոր փիլիսոփա Բանաստեղծ Եզեկիել մարգարեի խոսքերը՝ ասված հրեա ժողովրդի հանդեպ գործադրվող ահեղ ջարդերի կապակցությամբ. «Եվ ասեցիս... «Մարգարեաց ի վերայ շնչոյն»». եւ ասացեն զշունչն. «Եկ, շունչ, ի չորից հողմոց, եւ փչեա ի մեռեալս յայտոսիկ եւ կեցցեն»»: Եւ եմուտ ի նոսա շունչն, եւ եղեն կենդանի, եւ կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ...»: Նույնանում և համընկնում են հայ ժողովրդին բաժին ընկած ճակատագրի հետ: Հայ ժողովուրդը միլիոնավոր զոհեր և հսկայական տարածքներ կորցնելով՝ ծվարել է բռնաշափ այս քարքարուտի մեջ:

Հատուցման եղանակը մեկն է, եթե ուզում ես, որ քակարդված ազատությունը վերածվի հաղթանակի: Հարկ է թշնամուն հատուցել վրեժի բարձրագույն չափով. այն է՝ վերածննդի կուրացուցիչ լուսարձակի ուժով ցույց տալ մեր ժողովրդի ոչ միայն գոյատևման, այլև անընկճելիության փաստը: Այս սրբազան հավատը անհրաժեշտ է դարձնել իրականություն: Այնժամ հուսահատ թշնամին կատաղությունից պիտի ոռոճա՝ տեսնելով ողջ մի ժողովուրդ բնաջնջելու իր ծրագրի սնանկությունը, որ իր ջարդած միլիոնները նորից կյանք են ստացել, բերներեբան լցրել իրենց վաղեմի հաքազատ երկիրը:

1991թ.

Մայր Աթոռ ս. Էջմիածնում վերջերս տեղի ունեցած Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովին մասնակցում էր Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Խաթակ եպիսկոպոս Պարսամյանը: Մրբազան հայրը սիրով պատասխանեց մեզ հետաքրքրող հարցերին:

– Մրբազան, ի՞նչ խնդիրների շուրջ էր գումարվել Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողովը:

– Հայաստանյայց Եկեղեցին հնուց ի վեր առաջնորդվել ու ղեկավարվել է եկեղեցական կանոններով, եկեղեցական ազգային որոշումներով, օրենքի ուժ ստացած ավանդույթներով, ընտրյալ եկեղեցական մարմիններով: Հայ ազգը և եկեղեցին կազմում են մի միաձույլ և անքակտելի ամբողջություն: Դա նշանակում է, որ հայ եկեղեցու կառավարման գործում հոգևորականների հետ մասնակցում է նաև հավատացյալ հայ ժողովուրդը՝ իր ներկայացուցիչներով: Գերագույն Հոգևոր Խորհուրդը, որի անդամ են ինչպես հոգևորականներ, այնպես էլ աշխարհականներ, իր խորհուրդներով և գործունեությամբ մեծապես նպաստում է եկեղեցական, մշակութային, շինարարական և ազգային-հայրենասիրական ձեռնարկումների իրագործմանը: Հայաստանի քաղաքական նոր կացությունը հրամայական էր այս ժողովի գումարման, որը, հավատարիմ իր բարձր կոչմանն ու դերին, մեծ նվիրվածությամբ իր գործուն մասնակցությունն է բերում ազգային, եկեղեցական բազմազան հարցերի լուծմանը և Հայոց հայրապետի եկեղեցաշեն ծրագրերի կենսագործմանը:

– Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստն արտացոլե՞ց Ձեր հոգսերը և սպասելիքները:

– Պետք է նկատի ունենալ, որ այսօր արագ փոփոխությունների ժամանակաշրջան է, որի անմիջական կրողներն ենք մենք: Ստեղծված իրավիճակում փոփոխություններն անդրադառնում են քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վրա, և ժողովուրդն էլ հարկադրաբար ենթարկվում է նոր պայմաններին հարմարվելու հրամայականին: Եկեղեցին որդեգրել է մի ճշմարտություն՝ ավետարանական ճշմարտություն, որը դարեր շարունակ ուղեկցում է մեզ: Հենվելով այդ ճշմարտության վրա՝ փոփոխություններին համընթաց մենք պետք է գործավիզ կանգնենք մեր ժողովրդին, քանզի հերոսական հայ ժողովուրդը հաստատել է հողի վրա ինքնիշխան ապրելու, անկախ գոյատևելու հաստատուն կամք: Եվ այդ սուրբ ու դժվարին ճանապարհին մենք պետք է քրիստոնեական դավանանքը խորապես ուսուցանենք, արմատավորենք: Այսօր, քան երբևէ, մեր ժողովուրդն ունի դրա կարիքը, քանզի մեզ խորք կրոններն ու հարանվանությունները Հայաստանում ազատ գործունեության դաշտ են գտել և որոնք են սերմանում մեր ժողովրդի մեջ: Այսօր եկեղեցին այդ ուղղությամբ շատ անելիքներ ունի, որի համար ծրագրեր ենք մշակում:

– *Ինչպիսի՞ արձագանք գտան ծավալված վերջին իրադարձությունները Միյուրքում՝ կապված Գետաշենի, Մարտունաշենի և Հայաստանի սահմանամերձ գոտու հետ:*

– 76 տարի է անցել բոլորիս սրտերը բզկատող, հոգիները փոթորկող և մեր աչքերը արցունքով ու անսահման վշտով ողողող սև օրերից: Քաղաքակիրթ մարդկության հնագույն և արժանավոր մեկ մասնիկը կազմող, Արևելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, շինարար, աշխատավոր և խաղաղասեր ժողովուրդը ենթարկվեց անլուր մարտիրոսության: Այսօր նորից հայ ժողովրդի նկատմամբ դավեր են նյութվում, վկան՝ Սուճայիքը, Բաքուն, Գանձակը, որոնց հաջորդեցին Գետաշենը, Մարտունաշենը: Այդ

մտահոգությամբ վեհափառ հայրապետը կոչ արեց արտասահմանյան բոլոր Հայ Առաքելական Եկեղեցիների քեմերին՝ իրենց ձայնը բարձրացնել ի պաշտպանություն հայ ժողովրդի՝ ընդդեմ նրա նկատմամբ իրականացվող նոր ցեղասպանության: Ես, ներկայացնելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արևելյան քեմը, նամակ հանձնեցի նախագահ Բուշին, հանդիպում ունեցաւ բարձրաստիճան ղեկավարների հետ և հանգամանալից ծանոթացրի Ղարաբաղում և Հայաստանի սահմանամերձ գոտիներում ծավալվող ողբերգական իրադարձություններին, հաղորդեցի վեհափառ հայրապետի և ամերիկահայ համայնքի տեսակետը՝ ակնկալելով ըմբռնում և աջակցություն, որպեսզի չկրկնվի մի նոր 1915 թվական: Անշուշտ, ինչպես այդ, այնպես էլ Հայաստանի իշխանությունների կողմից արված դիմումները Ամերիկայի կառավարությանը և նախագահ Բուշին, ունեցան իրենց նշանակությունը: Այս տարվա մայիսի 17-ին Ամերիկայի սենատը ընդունեց հինգ կետից բաղկացած մի որոշում՝ դատապարտելով Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի տարածքում ապրող հայ բնակչության դեմ ԽՍՀՄ-ի կենտրոնի և ադրբեջանական իշխանությունների կողմից սանձազերծված հանցավոր գործողությունները:

– Համայն հայ ժողովուրդը, ի հայրենի երկիր և ի սփյուռս աշխարհի, արժանավայել, համազգային հանդիսությամբ ամեն տարի ապրիլի 24-ին նշում է նահատակության օրը: Ի՞նչ հնարավորություն է այդ օրն ընձեռում ամերիկահայ զաղութին՝ ի պաշտպանություն իր դատի օտար շրջանակներում:

– Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում, Սփյուռքի քեմերում ապրիլի 24-ին կատարվում են կրոնական հատուկ արարողություններ, կազմակերպվում են հուշի և հարգանքի հավաքույթներ՝ նվիրված մեր ազգային մեծ ողբերգությանը:

Այս տարի Եղեռնի օրվա առթիվ մենք Հայաստանից հրավիրել էինք Երևանի գեղագիտական կենտրոնի սաներին՝ անօրեն Հեմրիկ Իգիթյանի ղեկավարությամբ: Նյու Յորքի առաջնակարգ սրահներում ցուցադրվում էին մեր շնորհալի փոքրիկների նկարները և այլ աշխատանքներ: Հրավիրել էինք նաև Հայաստանի պետական մանկական սիմֆոնիկ նվագախումբը՝ Հակոբ Լոգյանի ղեկավարությամբ: Նրանց հետ էր երգահան Ալեքսանդր Հարությունյանը: Նպատակն էր՝ հուշատոնի համերգ կազմակերպել Հայաստանի վերածննդի քեմայով: Համերգը կայացավ Նյու Յորք Սենթր Էվրի Ֆիշը սրահում, որը լավագույններից մեկն է երկրում: Հրավիրել էինք աշխարհի տարբեր երկրների ղեկավարների, հատկապես այն երկրների, որոնք երկրաշարժի առիթով իրենց օգնության ձեռքն էին մեկնել հայ ժողովրդին: Համերգին մասնակցում էին բարձրաստիճան եկեղեցական հյուրեր: Համերգն անցավ բացառիկ հաջողությամբ, հոտնկայա ծափահարություններով: Համերգի ընթացքում հնչեցին Կոմիտասի, Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, ինչպես նաև եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ: Համերգն ամբողջությամբ հեռարձակվեց հեռուստատեսությամբ, նրան անդրադարձան պաշտոնական շատ քերթեր: Նույնպիսի հաջողությամբ համերգ տեղի ունեցավ ՄԱԿ-ի շենքում: Նման միջոցառումները նպաստում են ոչ միայն օտարների ուշադրությունը հրավիրել, այլև ամերիկահայությանը հաղորդակից դարձնել մեր ազգի մշակույթին, պատմությանը: Բարձր իմացականությամբ ժողովուրդը չի կորչում, չի սպառվում նահատակությամբ: Ձենքի բիրտ ուժի տիրապետության դիմաց կա հոգու տիրապետությունը, մշակույթի գորությունը: Ոգեկան այս ուժի մեջ է հայ ժողովուրդը շատ անգամ գտել իր փրկությունը:

– Անշուշտ, դժվար է մի հարցազրույցի մեջ ներառել բոլոր կարևոր հարցերը և խնդիրները, ուստի ի՞նչ կցանկանայիք ավելացնել:

– Այսօր՝ հերոսության, նահատակության ճանապարհի վրա թափ է առնում ազգովին վերածնվելու և ապրելու վճռականությունը: Բարձր քաղաքակրթությամբ մի ժողովուրդ չի կարող ստրկացված ապրել: Կատարվում է մեր մեծ նահատակների իղձը, երազը: Հայ ժողովուրդը գտել է իր ազգային վերածնության ճշմարիտ ուղին: Նա տիրանում է իր ազատությանը, ստեղծում իր պետությունը: Եվ բոլորս, համախմբված մեր նոր կառավարության շուրջ, պետք է գործվի լինենք նրան: Ինձ վախեցնում է ներքին թշնամին՝ անմիաբանությունը: Ուստի այսօր առավել, քան երբևէ, մեզ հարկավոր է գործողությունների միասնություն և ուժերի համախմբում ազգընտիր կառավարության շուրջ: Հավատանք մեր կառավարությանը, մեր ժողովրդին: Միշտ էլ ազատաբաղձ հոգու ամեն մի խոյանք դեմ է առնում բռնության ապառաժին: Միասնական ուժով կոփենք մեր հաղթանակը: Կմաղթեմ, որ հայ ժողովուրդը ամուր կառչած մնա իր սեփական, ազատ հայրենիքը ստեղծելու գաղափարին:

17 հուլիսի 1991թ.

ՀԱՍՏԱԳՈՒՄԱՐ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Վերջերս Նյու Յորք քաղաքում Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ Եպիսկոպոս Պարսամյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական եկեղեցիների հոգևորականների համա-

գումար, որին մասնակցում էին Ավստրալիայի, Եգիպտոսի, Անգլիայի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Ամերիկայի Հարավային և Հյուսիսային թեմերի առաջնորդներ, Կոստանդնուպոլսի, Երուսաղեմի պատրիարքությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև հոգևոր հովիվներ: Զմնարկված հարցերի, խնդիրների շուրջ գրուցեցինք Խաժակ Եպիսկոպոս Պարսամյանի հետ:

– Մրբազան, ի՞նչ նպատակով էր գումարվել համագումարը և ի՞նչ հիմնական հարցեր արծարծվեցին հայ հոգևոր հայրերի կողմից:

– Դարեր շարունակ հայ ժողովուրդն իր հայրենի հազարամյա օջախները պարպած, անգեմ ու անպաշտպան սփռվեց աշխարհի չորս ծագերում, բայց, հակառակ ջարդարար ու ոճրապարտ տերությունների ցանկության, համընդհանուր անտարբերության և անուշադրության, սեփական ուժերին ապավինելով, կարողացավ իբրև ազգ ապրել ու գոյատևել: Եվ հակառակ այն ամենի, որ այսօր էլ շարունակվում է հալածանք, ջարդ ու նահատակություն, վերստին բովանդակ ուժով դրսևորվում է ազգի համառ կամքը՝ գոյատևելու հայրենի հողի վրա: Այս էր այն հրամայականը, որ քելադրված էր մեզ՝ հոգևորականներին, կազմակերպելու եկեղեցականաց հավաք Միյուռքի համայնքների ներկայացուցիչների (թվով 60) մասնակցությամբ: Համագումարին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ Մայր Աթոռ ս. Էջմիածնից, որոնք բերել էին Ամենայն Հայոց հայրապետի օրհնությունն ու մաղթանքները, ինչպես նաև իր խորհուրդներն ու աջակցությունը՝ համագումարում քննարկվելիք հարցերի շուրջ:

Այսօր հրատապ հարց է Հայաստանում և Արցախում տիրող իրավիճակը: Անհրաժեշտ էր քննարկել, խորհրդակցել, եզրակացություններ ու որոշումներ մշակել՝ գործնական հնարավոր միջոցներով սատար կանգ-

նելու մեր հայրենակիցներին: Համագումարի անունից մամակներ ուղարկեցինք պրեզիդենտ Բուշին, Գորբաչովին, Միացյալ ազգերի կազմակերպության նախագահին, Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին և Ամենայն Հայոց կաթողիկոս Ս.Տ. Վազգեն Առաջինին: Այդ մամակ որոշումների մեջ արտացոլված էին մեր անհանգստությունը և տեսակետը Արցախի խնդրի վերաբերյալ, ինչպես նաև Հայաստանում տիրող ներկա իրավիճակի և նոր առաջադրվող հարցերի շուրջ: Ես հանդիպումներ եմ ունեցել նաև մի քանի սենատորների և կոնգրեսականների հետ, նրանց ներկայացրել այսօր հայ ժողովրդին սպառնացող վտանգները և նրանց կանխման տարբերակներ: Ամերիկահայ համայնքների անունից ներկայացրել ենք մեր անհանգստությունը և դիտողությունները Հայաստանի ներկա իրավիճակի առնչությամբ:

– *Մոբազան հայր, 1991 թվականի սեպտեմբերի 21-ին հայ ժողովուրդը Հայաստանի տարածքում համաժողովրդական հանրաքվե անցկացնելով՝ դրսևորեց և վճռեց ազատ, անկախ ապրելու իր կամքը: Ինչպիսի՞ն է Ձեր և ամերիկահայ հասարակության կարծիքը այդ հարցի վերաբերյալ:*

– Մեր հայրերը երագում էին՝ արդյո՞ք պիտի գա այն օրը, որ հայի համերաշխության ծիրանի գոտին կամար կապի Մայր Հայաստանի և Մփյուռքի հայության միջև: Ահավասիկ, մոտեցավ բաղձալին: Ի սեր հայության ֆիզիկական գոյության՝ մոռանալ բոլոր տեսակի կրոնական, գաղափարական, դավանական տարածայնությունները և համախմբվել ու ծառայել մի նպատակի: Այնտեղ, ուր չկա համերաշխություն և համագործակցություն, այնտեղ չկա ազգային կյանք: Ամերիկահայությունն էլ, մասը կազմելով Մայր հայրենիքի, իր մտահոգությունն ուներ սեպտեմբերի 21-ի առիթով: Այսօր Հա-

յաստանում տեղի ունեցող իրադարձությունները մեր իսկ ուշադրության կենտրոնում են, և մենք պարտավորված ենք մեր համեստ նպաստը բերելու և մասնակիցը դառնալու հայ ժողովրդի մի հատվածի ճակատագրին: Հավաքական կյանքի դիմադրական ուժը ազգի ոգին է, որի շնորհիվ ազգը դառնում է անպարտելի: Այն օրը, երբ կմեռնի ազգային ոգին հայ ժողովրդի մեջ, կմարի նաև ազգային խնդիրներին հետամուտ լինելու կամքը: Հայը դարերով աղոթեց, ողբաց իր վիշտը և երգեց իր ազատությունը, անկախությունը: Սեպտեմբերի 21-ը կմտնի պատմության մեջ որպես կարևոր, բախտորոշ թվական: Մեկ բան շատ որոշ է՝ ինչպես Երկիր մորորակը առանց արևի չի կարող գոյություն ունենալ, այնպես էլ ժողովուրդներն առանց ազատության չեն կարող բնականոն կյանքով ապրել: Կսպասենք ավելի լավ օրերի, որոնք հավանաբար, չուշանան՝ համաձայն ժամանակի անշրջելի օրենքի: Մարդասպանների ձեռքը չկարողացավ ոչնչացնել այն ազգը, որին աստվածային նախախնամությունը պաշտպան էր կանգնել: Պատահական չէ, որ պատմագիրներ, ռազմագետներ հայկական բարձրավանդակը, իր աշխարհագրական դիրքի պատճառով, կոչել են պատերազմների թատերավայր, կռվախնձոր Արևելյան և Արևմտյան ազգերի: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում տեսավ աշխարհակալ կայսրությունների ծնունդն ու նրանց գերեզմանը: Հայ ժողովուրդը, հակառակ իր նոր միջավայրերի կլանող հզոր ազդեցության, գերագույն ճիգերով շարունակեց պահպանել դարերից ժառանգած մշակույթն ու ազգային դիմագիծը:

– *Այս բախտորոշ օրերին ի՞նչ կմաղթեիք մեր ժողովրդին:*

– Ուզում եմ հիշել աշխարհահռչակ գիտնական Լուի Պաստերի միտքը. «Հայրենիքը բարձր է ամեն բանն ու պետք է երկյուղածությամբ հարգվի անոր անբռնադա-

տելի ճակատագիրը՝ ինչ դժնդակ պայմաններու տակ ալ եղած ըլլայ»։ Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է հայրենիքի գոհասեղանին դնելու իր հնարավորությունների առավելագույնը։ Այսօր մեր ժողովուրդը վշտի, քախտի և անորոշության հետ ապրում է մի խորունկ ուրախություն, որ վերջապես կարողացավ թոթափել 70 տարվա ապազգային քաղաքականությունը, որի հետևանքներից է Նախիջևանի, Արցախի այսօրվա վիճակը։ Մենք այլևս սխալվելու իրավունք չունենք։ Եվ բաժան-բաժան չենք կարող մույնիսկ ամենադյուրին ու լավագույն ծրագրերն անգամ իրագործել։ Եթե միավորենք բոլորիս ջանքերը և համախմբվենք, վստահ եմ, որ պիտի իրագործվեն մեր հավաքական երազներն ու ակնկալիքները։ Կադորքեմ, որ աշխարհով մեկ սփռված հայ ժողովուրդը մեկ անձ, մեկ հոգի դարձած համախմբվի այսօրվա Հայաստանի Հանրապետության շուրջ և կերտի իր ազատ, անկախ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

30 սեպտեմբերի 1991թ.

ՊԻՏԻ ԿԵՐՏԵՆՔ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը հայի ամմահության մասին գրել է. «Օրհնյալ ես դու, Հայոց աշխարհ, որչափ քանդող թշնամույ ձեռքը կջանար գրեզ իսպառ ճռաքաղ առնել եւ որթերդ արմատն յօտել, դու անդրէն մոր-մոր ուռեր տալով կըբողբոջէիր։ Հաւատա դու, Հայոց աշխարհ, թէ Աստուծոյ օրհնութիւնն էր, որ միշտ անապական պահեց քու ծեսերդ»։ Նա երանի կտար, որ ինքը լիներ հայ ազգի վերջին ողբերգուն։

Դժբախտաբար, նրանից հետո հայ ողբերգուների թիվը ավելացավ՝ ժողովրդին բաժին ընկած դառը ճակատագրի պատճառով։ Այսպիսի խոհերով ու մտորումներով գրույց ծավալվեց Մայր Աթոռ ս. Էջմիածնում հյուրընկալված Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ եպիսկոպոս Պարսամյանի հետ։

– Մրբազան, Ձեր յուրաքանչյուր այցելություն Հայաստան՝ հայ ժողովրդի համար դառնում է հոգեպարար, քանզի Դուք Ձեզ հետ բերում եք օրհնություն, բարիք, որի խոստովանությունն է Մայր տաճարում մատուցած Ձեր պատարագը և ոգեշունչ քարոզը։

– Հրավեր ստանալով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից, ես Մայր Աթոռ ս. Էջմիածին եկա հոգեկան մեծ ուրախությամբ։ Ինչպես ես, այնպես էլ մեր մյուս թեմերի առաջնորդները եկել էինք մասնակցելու Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստերին։ Նիստերի ընթացքում քննարկվեցին հրատապ հարցեր՝ ինչպես եկեղեցական-հոգևոր կյանքից, այնպես էլ մեր ժողովրդի ցավերի, հոգսերի վերաբերյալ։ Միյուրեքահայ մարդը, ինչ հանգամանքներում էլ գտնվի, կարող է մեծ կամ փոքր չափով օգտակար լինել մեր հայրենիքին, որովհետև կան բազմաթիվ չլուծված հարցեր և դժվարություններ, իսկ մենք արտասահմանից հնարավորություն ունենք հետևելու Հայաստանում զարգացող դեպքերին և մտահոգված անել կարելին՝ հայրենիքի հոգսերը թեքացնելու, վերքերին սպեղանի դնելու համար։ Այսօր հրատապ հարց է Ղարաբաղում ընթացող պատերազմը, և մեր խնդիրն է, որքան հնարավոր է, ավելի լայնորեն միջազգայնացնել այն, իսկ Ղարաբաղի խնդրի խաղաղ ընթացքը, եթե կա այդպիսին, թողնել մասնագետներին, որոնք գիտեն, թե նման իրավիճակներում որոնք են խաղաղության մշակվելիք ուղիները։

– Մորթազան, մինչ այժմ Մփյուռքի հայոց թեմերի առաջնորդները կատարում էին դեսպանների դեր, հատկապես վերջին չորս տարիների ընթացքում հայ ժողովրդի ձայնը միջազգային ասպարեզներ հանելու, օտար հանրությանը մեր ցավին, դատին հաղորդակից դարձնելու խնդրում։ Այսօր իրավիճակը փոխվում է։ Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև հաստատվում են դիվանագիտական միջպետական հարաբերություններ, նշանակվում են դեսպաններ։ Ինչպես էք այսուհետ Դուք տեսնում Ձեր գործունեությունը։

– Ճիշտ նկատեցիք. եկեղեցին և նրա թեմերի առաջնորդները տարիներ շարունակ անպաշտոն դեսպանների դեր են տանում՝ յուրաքանչյուրն իր երկրի կառավարությանը ներկայացնելով հայ ժողովրդի դատը, նրան ցուցաբերվելիք այս կամ այն օգնությունը, ինչպես նաև նպաստելով մշակութային կապերի ստեղծման գործին։ Այսօր իրավիճակը փոխվում է, Մփյուռքում նշանակվում են պաշտոնական դեսպաններ։ Մնում է, որ Հայաստանի դեսպանները ճիշտ կողմնորոշվեն, կարողանան համատեղել սփյուռքահայ ուժերի գործունեությունը, իրենց աշխատանքով մեկը մյուսին լրացնեն։ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ներկայացնող առաջնորդները լրիվ պատրաստ են գործակցելու հայրենի իշխանության հետ։ Հայաստանում տիրող գաղափարական և քաղաքական ամենատարբեր գոյավիճակում Էջմիածինը ներկայացնող առաջնորդներն իրենց գործունեությամբ եղել են կենտրոնաձիգ և ոչ թե կենտրոնախույս։ Մենք հավատացել ենք, որ որևէ կենտրոնախույս աշխատանք մեր հայրենիքի նկատմամբ բաժանում և ջլատում է հայ ժողովրդին։ Փոքր ազգ ենք, ուստի առավել ևս մեզ հարկավոր է գործողությունների միասնություն՝ ինչպես հայրենի կառավարության, այնպես էլ սփյուռքահայ գործիչների, հատկապես առաջնորդների միջև։ Եթե այդ աշ-

խատանքը լավ կազմակերպվի, անուշտ, դեսպանների աշխատանքն էլ ավելի արդյունավետ և դյուրին կլինի և առավել օգտակար ժողովրդի, հայրենիքի համար։

Պետք է հաշվի առնել, որ ամենուրեք շատ հարցեր լուծվում են անձնական ծանոթությունների ճանապարհով։ Առաջնորդները երկար տարիների իրենց գործունեությամբ և փորձով, ինչպես նաև տեղի իշխանությունների հետ հարաբերություններ մշակելով՝ ունեն այդ հնարավորությունները և կարող են օժանդակել դեսպանների աշխատանքն արդյունավետ դարձնելուն։ Հայ դեսպանների առաջնահերթ խնդիրը պետք է լինի ոչ միայն լավ հարաբերություններ մշակել այս կամ այն կառավարության հետ, այլև կարողանալ գործակցել համայնքների առաջնորդների, ազդեցիկ ղեկավարների հետ՝ միասնական ջանքերով նպաստելով իր պետականությունը կերտող հայ ժողովրդին։

– Ի՞նչ կմաղթեիք մեր ժողովրդին։

– Բնական է, սփյուռքահայ հոգևորականիս մտահոգությունը հայրենիքի, Արցախի համար է։ Թանկ է հայրենիքի անկախությունը, ապահովությունը։ Մեր հայրենիքը դժվար պահեր է ապրում, տնտեսական, քաղաքական, նյութական խնդիրներ ունի։ Բոլորիս ջանքերը պիտի ուղղվեն՝ հաղթահարելու այս կնճիռները։ Անցյալում բազմաթիվ դժվարություններ, հալածանք ու խտրակաություն տեսած հայ ժողովուրդը, կարծում եմ, կունենա իմաստություն և կամքի ուժ, որպեսզի հաղթահարի այսօրվա ճգնաժամը և պահպանի իր համար ամենաթանկագին նվաճումները՝ ազատությունն ու անկախությունը, որի համար մեր ազգի բազմաթիվ սերունդներ երազել են ու մաքառել։ Համբերություն բոլորիս։

30 մարտի 1992թ.

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով Հայաստանում էր գտնվում Ամերիկայի Արևելյան քեմի առաջնորդ Խաժակ Եպիսկոպոս Պարսամյանը, որը սիրով պատասխանեց մեր հարցերին:

– Սրբազան, այսօր աշխարհով մեկ սփռված ամեն մի հայ անհատի հայացք պետք է սկեռված լինի դեպի Մայր հայրենիք, քանզի 20-րդ դարում պատմության մեջ երկրորդ անգամ մեզ հնարավորություն ընձեռվեց կերտել անկախ պետություն, իսկ հայրենիքը հայտնվել է ծանր տնտեսական և պատերազմական պայմաններում, որն էլ կարող է դժվարություններ ստեղծել այդ սուրբ գործի հաղթանակի ճանապարհին: Այս անգամ մենք հաղթանակով դուրս կգա՞նք, թե՞...

– Հարցը շատ կարևոր է, որը մեզ անհանգստանալու և ավելի լուրջ խորհելու առիթ է տալիս: Հայաստանում տիրող ծանր տնտեսական, քաղաքական վիճակը և հարևան երկրի՝ Ադրբեջանի կողմից ծավալվող պատերազմական գործողությունները սահմանամերձ շրջաններում, դարաբաղյան հակամարտության անորոշությունը հայրենիքի նկատմամբ էլ ավելի սիրով, խանդաղատանքով պետք է լցնի աշխարհով մեկ սփռված բոլոր հայերի սրտերը և նրանց ուշադրությունը հրավիրի անկախ Հայաստանի Հանրապետության վրա: Նրանք պետք է գոտեպնդվեն և համախմբվեն կենդանարար այդ գաղափարի շուրջ: Երբ պատմաբաններն ու քաղաքագետները սկսեցին քննադատել կամ փաստել 1918-20 թվականներին նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կործանման պատճառները, տրվում էր հետևյալ հարցը. «Ինչո՞ւ չկարողացան պահել»: Իսկ ամեն մի հայ սրտի խորքում փայփայում էր. «Ախ, եթե մեկ

անգամ էլ նման հնարավորություն ստեղծվի»: Ահա, հնարավորությունը մեր ձեռքում է, և մենք, ինչպես այն ժամանակ, մեկ ուժ չենք դառնում, չենք համախմբվում մեկ գաղափարի շուրջ, որպեսզի չվտանգենք մեր նորաստեղծ պետությունը: Երբ ամռանը Հայաստանում քաղաքական անկայուն վիճակ ստեղծվեց, մենք՝ Ամերիկայի երեք քեմերի առաջնորդներս՝ Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Կամադայի առաջնորդ Հովհան Եպիսկոպոս Տերտերյանը և ես, սրափվելու կոչ հղեցինք մեր հայրենակիցներին, որպեսզի ինչ-ինչ պատճառներով հայրենիքի ճակատագիրը չվտանգվի: Այսօր ամեն մի հայ իրավունք չունի դիտողի դերում հայտնվելու, և պատմությունն էլ չի ների նրանց: Ես չեմ վախենում արտաքին թշնամիներից, այլ վախենում եմ ներքին թշնամիներից, որոնք կարող են, ներսից քանդելով, կործանել երկիրը, ինչպես այդ կատարվեց 1920 թվականին: Հեշտությամբ հայրենիք չեն կառուցում: Ամեն ինչ ավելի դյուրին կլուծվի, եթե ներքին հասկացողություն և ըմբռնողություն տիրի մեր իսկ կողմից հարգված ու վստահված նախագահի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի և ժողովրդի միջև: Անկասկած է, որ ժողովուրդները միշտ էլ կարողանում են գտնել իրենց ճշմարիտ ուղին, և ահա մեր ժողովուրդը գտավ իր ազգային պետականության ստեղծման ուղին, ինչպես նաև վերելքի հնարավոր միջոցները: Ծանր է այսօր վիճակը Հայաստանում: Երբ տեսնում եմ հացի հերթերում ժամերով սպասող մեր հայրենակիցներին, սիրտս մղկտում է: Մենք հնարավորության սահմաններում անում ենք կարելին, որպեսզի կարեկից լինենք մեր ժողովրդին: Մեր կողմից կազմակերպվում է ինչպես անհրաժեշտ սարքավորումների, դեղորայքի, մասնագետների, այնպես էլ սննդամթերքի օգնություն:

– Դուք վստահ եք, որ Ձեր ուղարկած օգնությունը ամբողջությամբ հասնում է հասցեատերերին:

– Ես կասկածելու առիթ չունեմ, քանզի մեր քեմի կողմից կազմակերպված օգնության առաքումը և տեղերում բաժանումը կատարվում է Ամերիկայից եկած մեր վստահված անձանց կողմից:

– Դարեր շարունակ մեր ժողովրդին պակասել է խաղաղություն և ապահովություն: Արցախի ժողովուրդը կայրի՞ այդ երազային պահը:

– Մենք մեր գոյության փաստով ապացուցել ենք ամբողջ աշխարհին, որ մեր ժողովուրդը նվաճել է արևի տակ ապրելու իր անկապտելի իրավունքը: Արցախի ժողովուրդը չէր կարող հաշտվել ստրկության հետ: Իր վրայից մաքրելով 70-ամյա ստրկության փոշին՝ պահանջեց արևի տակ ազատ ապրելու իր իրավունքը: Արցախյան շարժումն արթնացրեց հայ ժողովրդին, մաքրեց մեր արյունը, մեզ ազատագրեց ստրկության խաբանից և մեկ անգամ ևս հաստատեց հարատևելու մեր կամքը: Ահավասիկ աշխարհը չի կարող հաշվի չնստել այս բացարձակ փաստի հետ: Արցախի ժողովուրդն իր անկոտրում կամքով ձեռք կրերի դարերով երազած խաղաղությունն ու ապահովությունը: Մեր ազգն, ի պատիվ իրեն, չնայած մեր պատմության ընթացքում եղած բազմաթիվ վերուվարումներին, ապրելով չարքաշ կյանքով, իրեն դրսևորել է որպես շրջահայաց, խոհական և բոլոր ազգերի մեջ հաստատել է իր տեղը: Հայը խելացի ժողովուրդ է, ուստի վստահաբար պետք է ասեմ, որ ծառացած դժվարությունները ժամանակավոր են և կհաղթահարվեն: Մեր դառը փորձը ստիպում է, որ այս անգամ զոհե հաղթահարենք, չկրկնենք 1918-20 թվականների սխալները և հաղթանակները պսակենք փառքով: Այստեղ կարող եմ լավատես լինել այն մասին, որ գալիքը լուսավոր պետք է լինի և հայ ժողովրդի զավակները ոչ քեզ զլխա-

հակ, ցույց ձեռքին կթափառեն երկրերիկիր, այլ հարազատ հողի վրա կկերտեն մտքի բոխքները՝ արարչական ուժեղ հրայրքով: Մաղթեմ, որ այն շատ չուշանա, և մեր ժողովուրդը լծվի իր խաղաղ աշխատանքին, զարգանա համաչափ և բազմակողմանիորեն: Ես հավատում եմ հայ ժողովրդին, անկախ, ազատ Հայաստանի Հանրապետության գալիքին:

10 նոյեմբերի 1992թ.

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՆԸՆԿՈՒԼԻ ՈԳԻՆ ՍԵՐ ՄԵՋ Է

Վերջերս Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի հրավերով Մայր Աթոռ ս. Էջմիածնում էր գտնվում Ամերիկայի Արևելյան քեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը:

Ստորև ներկայացնում ենք հարցազրույց սրբազան հոր հետ:

– Սրբազան, Դուք առիթ ունեցաք մասնակցելու Հայաստանի Հանրապետության անկախության չորրորդ տարեդարձի տոնակատարությանը: Ի՞նչ ապրումներ և զգացումներ կարող էր ունենալ պատմական Հայաստանում ծնված և մեծացած հոգևոր առաջնորդը:

– Ինձ համար հոգեկան մեծ բավարարություն էր մեր հայրենիքի անկախության 4-րդ տարեդարձի առիթով գտնվել հայրենի հողի վրա և իմ հարազատ եղբայրների, քույրերի հետ մասնակցել շատ կարևոր տոնախմբությանը, որը իսկապես տոն է ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ Սփյուռքում ապրող հայ զավակների հա-

մար: Ես մինչև իմ Հայաստան ժամանումը, Ամերիկայի մեջ շրջաբերական ուղարկեցի մեր բոլոր եկեղեցիներին, որպեսզի մասնավոր փառաբանական աղոթք մատուցեն առ Աստված՝ հայցելով, որ Աստված գորավոր, ազատ, անկախ, զերծ պահի ամեն փորձություններից և խաղաղությունը հավերժացնի մեր սուրբ հողի վրա: Պետք է խոստովանեմ, որ ինձ համար ամենից հուզումնալից պահը եղավ, երբ Ամենայն Հայոց վեհափառ հայրապետի զլխավորությամբ, Հայաստանի Հանրապետության նախագահի, կառավարության անդամների, հոգևոր դասի, տարբեր երկրների դեսպանների մասնակցությամբ բարձրացանք Եռաբլուր, ուր հանգչում են արցախյան շարժման զոհված մեր զավակները, որոնք գիտակցություն ունեցան իրենց կյանքը զոհելու, որպեսզի այսօր հայ ժողովրդը կարողանա իր անկախությունը ապահովել: Ես հոգով, սրտով աղոթեցի նրանց հոգու խաղաղության և այն զաղափարի համար, որ նրանց թափած արյունը սրբությամբ հավերժ պահի հայոց հողը: Առիթ ունեցա մասնակցելու նաև բարձրագույն հրամանատարական ուսումնարանի բացման արարողությանը: Մեծ ուշադրություն և ոգևորություն էր, երբ մեր բոլորի առջևով տողանցքով անցնում էր զինվորների զունդը: Նրանց կեցվածքից զգացվում էր, որ հպարտ են իրենց հայրենիքով, որի զինվորն են, և այդ հպարտությունն էլ փոխանցվում էր մեզ: Այդ պահին ես ունեցա հավատք և համոզում, որ մեր ժողովուրդը պատրաստ է իր հայրենիքը առավել գորացնելու, թշնամական հարձակումներից պաշտպանելու, որը երաշխիք է, որ մոտ ապագայում հայրենիքը կտեսնեն բարգավաճ բոլոր բնագավառներում:

– Սրբազան, գաղտնիք չէ, որ աղանդները, քափանցելով Հայաստան աշխարհ, մուտք են գործում նաև բա-

նակ և որոնք են սերմանում մեր զինվորների մեջ: Այդ ամենից խուսափելու լավագույն ճանապարհը ո՞րն է:

– Մեր պատմությունը լավագույն դասն է մեզ համար:

Դեռևս դպրոցից մեզ ուսուցանում են հայոց պատմություն՝ բազմաճյուղային համար մեր պապերի, հայրերի ունեցած հաջողություններին և ձախորդություններին, որպեսզի իրենց կյանքի փորձությունից լավագույն դասեր քաղենք: Ուստի կցանկանայի մեկ անգամ ևս հիշել Վարդանանց պատերազմի մասին, երբ ազգը, եկեղեցին միատեղ, առանց վարանելու կարողացան պաշտպանել սուրբ հողը և հավատքը: Մեզ համար մեր եկեղեցին մեր մայրն է, իսկ Ավետարանը, Սուրբ գիրքը՝ մեր հայրը: Այս գիտակցությամբ Վարդանանց գորականները պայքարեցին՝ պաշտպանելու հայրենիքը, մայր եկեղեցին: Ահավասիկ, մնան խոհի ու հոգու շնորհիվ է, որ կարողացանք դարեր շարունակ տոկալ և հաղթահարել ամեն տեսակ դժվարություններ: Ուստի հպարտ պիտի զգանք անցյալի և, ինչու չէ, այսօրվա հաղթանակներով՝ իբրև ժողովուրդ, իբրև եկեղեցի: Հետևաբար, իմ մաղթանքն է, որ մեր մարտիկները հեռու մնան ալլաղավան, հայ ժողովրդի համար խորթ հասկացողություններից, աղանդավորական շարժումներից և հոգեպես, ֆիզիկապես, առանց վարանելու հավատարիմ մնան մեր սուրբ եկեղեցուն և այդ հավատքի վրա խարսխված շարունակել մեր կյանքը:

Հայ Առաքելական Եկեղեցին պետք է տոնախմբի քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունման 1700-ամյակը, որը մեկ անգամ ևս առիթ պիտի հանդիսանա մեր ժողովրդի հոգևոր վերագարթոնքի, և եթե մենք կարողացել ենք թշնամիներին հաղթել, ապա շնորհիվ անկողոպտելի մշակույթի և ոգու, որը մենք ստացել ենք մեր սուրբ եկեղեցուց, իսկ եթե մեր եկեղեցուց հեռանանք, ապա հեռացած կլինենք մեր արմատներից:

– *Դուք հնարավորություն եք ունեցել հանդիպելու քարձրաստիճան գինվորականների հետ: Ձեր գրույցներից ինչ տպավորություն եք ստացել: Արդյո՞ք հայ գինվորը կարող է պաշտպանել իր հայրենիքը:*

– Բարեբախտություն եմ ունեցել հանդիպելու հայ մարտիկների, զորականների հետ և իմ գրույցներից տպավորվել եմ, որ նրանք ուժեղ հոգով, գիտակից գինվորներ են՝ պատրաստ ի գին ամեն զոհողության, նույնիսկ կյանքի՝ պաշտպանելու հայրենիքը: Եվ ես վստահ եմ, որ այդպիսի ոգու ոչ մի ուժ չի կարող հաղթել, որը մեր ազգը հաստատել է պատմության ընթացքին, և հայը ապրում է ու կապրի այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեջ նստած է անընկճելի Վարդանանց ոգին: Ես կմաղթեմ, որպեսզի Հայաստանի անընկճելի բանակը զորավոր լինի իր կոչումի և իր հավատքի մեջ, կադրերն, որ խաղաղություն տիրի հայրենիքի սահմաններում, քանզի խաղաղությունն ամենակարող ազդակն է ազգի զոյատևման և բարգավաճման:

– *Դուք՝ որպես հոգևոր առաջնորդ, բնականաբար մտահոգ եք հայրենիքի ճակատագրով: Ունե՞ք ասելիք այդ ուղղությամբ:*

– Ասում են՝ բացարձակ երջանկություն չկա: Հենց տիեզերքի ստեղծագործությունը երջանկություն է, որտեղ միմյանց հաջորդում են անձրևին՝ արևը, ստվերին՝ լույսը, այդպես նաև մարդկային կյանքի մեջ խառն են տրտմության և ուրախության զգացումները: Այս վերջին քառամյակը ցնծության, ուրախության, երջանկության ժամանակաշրջան է, քանզի վերջապես մեր ժողովուրդը մեր բռաչափ հողի վրա հաստատակամորեն ձեռք բերեց ինքնիշխան ապրելու բախտավորությունը, որը դժվար է և պարտավորեցնող: Երջանիկ ենք, քանզի մեկ անգամ ևս վերականգնվեց ազգային արժանապատվությունը: Եվ ես այն հավատացյալներից եմ, որ հավատում եմ, թե կհաղթահարվեն ժամանակավոր դժվարությունները, և

պետք չէ հուսալքվել. արդեն իսկ լուսաբաց է: Մաղթեմ, որ արևը շուտ ծագի Հայաստան աշխարհի վրա, հայ գյուղացին, բանվորը, մտավորականը ազնվորեն վայելեն իրենց արդար քրտինքը: Լիափույս եմ, որ արշալույսը բացված է մեր ժողովրդի կյանքի հորիզոնի վրա:

19 Խոկտեմբերի 1995թ.

ՉԽՆԱՅԵՆՔ ՄԵՉ ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ, ԱՅԼԱՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ՄԵՉ ՉԻ ԽՆԱՅԻ

Հայաստանում Հայ Առաքելական Եկեղեցու թեմերի առաջնորդներին նշանակում է Ամենայն Հայոց կաթողիկոսը, Սփյուռքում՝ թեմի առաջնորդն հաստատվում է ընտրությամբ: Այս տարի ապրիլի 27-ին Թեքսաս քաղաքում տեղի ունեցան Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդի ընտրությունները, որտեղ ձայների բացարձակ մեծամասնությամբ երկրորդ անգամ թեմի առաջնորդ ընտրվեց Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը: Խաժակ սրբազանին «Հայաստանի Հանրապետություն» թերթի խմբագրության աշխատակիցների կողմից շնորհավորելով և մաղթելով այդ աստվածահաճո, եկեղեցանվեր ու հայրենաշեն գործում բեղմնավոր աշխատանք, խնդրեցինք պատասխանել մեզ հուզող մի քանի հարցերի:

– *Սրբազան, ո՞րն է Հայոց Եկեղեցու առաքելությունը Ամերիկայի մեջ:*

– Հայոց Եկեղեցու առաքելությունը հիմնված է Քրիստոսի վարդապետության վրա: Քրիստոս աշխարհ եկավ մարդկության փրկության համար, և այդ էր նրա առաքե-

լությունը, որն էլ նրա երկու աշակերտների՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի միջոցով հասավ Հայոց աշխարհ: Շարունակելով նրանց արդար գործը՝ Գրիգոր Լուսավորիչը 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում վավերացրեց որպես պետական կրոն: Գրիգոր Լուսավորիչն էր, որ հիմնեց մեր Հայոց Եկեղեցին, Մայր տաճար ս. Էջմիածինը, որը դարեր շարունակ եղավ, այսօր և վաղն էլ պլիտի լինի մեր ժողովրդի քրիստոնեական հավատքի խորհրդանիշը: Հայոց Եկեղեցին Ամերիկայի մեջ ունի իր կարևոր դերը, առաքելությունը՝ տարագիր հայերի կյանքում: Իբրև եկեղեցի՝ կջանանք մեր զավակներին, մանավանդ Ամերիկայի երիտասարդ սերնդի մեջ ներարկել հայ եկեղեցու հավատքը, սովորությունները, երաշխավորել այն իրականությունը, թե հայը հայրենիքից դուրս, ճակատագրի բերումով սփռված լինելով արտասահմանի մեջ, պետք է շարունակի պահել հայ ոգին՝ սիրելով իր հայրենիքը, Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որը հավատքի կենտրոնն է:

– Մրբազան, բնականաբար Ձեր թեմի գործունեությունը մասամբ նաև պայմանավորված է հայրենիքում և այլուր բացված գրասենյակներով: Ի՞նչ խնդիրներ ունի իր առջև դրված և ի՞նչ գործունեություն է ծավալում յուրաքանչյուր գրասենյակն առանձին վերցրած:

– Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդարանը գտնվում է Նյու Յորքի սուրբ Վարդան մայր տաճարի համակարգում, որտեղ գործում են տարբեր բաժանմունքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրն ու գործունեության շրջանակը: Ես հատկապես կցանկանայի նշել՝

1. Հայ կրթական և մշակույթի կենտրոնը, որտեղ մշակվում և պատրաստվում են հատուկ ծրագրեր, որպեսզի կարողանանք ամերիկացիներին երիտասարդ սերնդի

մեջ արթնացնել սեր դեպի հայ մշակույթը, մատչելի և պարզ մայրենի լեզվով հրատարակված գրականությանը ծանոթացնել հայ ժողովրդի և եկեղեցու պատմությանը:

2. Հաջորդը՝ կրոնական դաստիարակության կենտրոնն է, որի հիմնական նպատակն է կիրակնօրյա վարժարանների միջոցով ամերիկահայ երիտասարդներին փոխանցել հայ եկեղեցու հավատքը, վարդապետությունը և ավանդույթները: Ջուզահեռաբար կենտրոնը կազմակերպում է դասախոսություններ, հրապարակում առանձին գրականություն, որպեսզի մեր երիտասարդներն ավելի մոտիկից հնարավորություն ունենան հաղորդակցվելու դարերով մեզ ժառանգված հավատքին:
3. Շատ կարևոր է առաջնորդարանում գործող երիտասարդաց ծառայության բաժանմունքը, որի միջոցով կազմակերպվում են զանազան հավաքույթներ, միջոցառումներ, երեկոներ, որտեղ հայ երիտասարդները, հավաքվելով, ծանոթանում են միմյանց հետ, բարեկամանում և այդ հավաքույթների ժամանակ աշխատում են հայերեն խոսել:
4. Վերը նշված բաժանմունքների կողքին գործում է նաև ընկերային ծառայության գրասենյակը: Հսկա Ամերիկայի մեջ անհատը հաճախ կարող է ենթարկվել փորձությունների: Այդ փորձությունները անխուսափելի են ինչպես մոր գաղութների, այնպես էլ ծերերի, երիտասարդ ընտանիքների համար: Առաջնորդարանում գործող այս ծառայությունն է, որ զբաղվում, մշակում է համապատասխան ծրագրեր բոլոր կարիքավորներին նյութական, բարոյական օգնություն ցույց տալու համար: Ինչպես գիտեք, վերջին շրջանում Բաքվից Ամերիկա տեղափոխվեցին շատ փախստականներ, անշուշտ, ոչ իրենց կամքով: Եվ

մենք առանձնահատուկ ուշադրություն ենք ցուցաբերում նրանց նկատմամբ, որպեսզի այդ հորձանուտում չկորչեն նոր տարագիրները:

5. Առաջնորդարանի գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում «Գրիգոր և Կլարա Ջոհրապետ» տեղեկատվության կենտրոնը: Կենտրոնի աշխատանքներից օգտվում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի գիտնականներ, ուսանողներ, լրագրողներ, հետաքրքրասերներ: Կենտրոնն ունի գրադարան, ընթերցասրահ, որտեղ այցելուները կարող են ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը, հավատքին, վարդապետությանը, ներկա անցողիկ և տեղեկություններ ստանալ Արցախի մասին: Վերջին շրջանում կենտրոնը նյութեր է տրամադրել ամերիկացի լրագրողներին, որոնք, գալով Հայաստան, Արցախ, ավելի լավ պատկերացում են կազմել արցախահայության և նրա արդար պայքարի մասին:
6. Հայաստանում 1988 թվականին տեղի ունեցած երկրաշարժը հարկադրեց ստեղծել «Հայ օգնության ֆոնդի» գրասենյակը, որը շարունակում է իր աշխատանքներն առ այսօր, և այդ գրասենյակի մասնաճյուղը մենք ունենք Հայաստանում, որպեսզի կարողանանք էլ ավելի կազմակերպված կենտրոնացնել մեր աշխատանքները հայրենաշինության սրբազան գործում և հասնել մեր բոլոր եղբայրներին, քույրերին, որոնք կարիք ունեն օգնության ինչպես երկրաշարժի գոտում, Արցախում, այնպես էլ Հայաստանում:
7. Տիկնանց կենտրոնական միության հանձնախմբի մասին ևս առանձին արժե խոսել: Ի պատիվ Մփյուռքի հայ կանանց՝ համայնքների եկեղեցիների սյուները նրանք են, որոնց ժրաջան աշխատանքի շնորհիվ հայ եկեղեցին շարունակում է իր գործունեությունը և առաքելությունը: Ամեն եկեղեցի ունի իր կազմա-

կերպված, գորավոր և ակտիվ տիկնանց միությունը, որոնք առաջնորդարանի տիկնանց միության հանձնախմբի օղակներն են կազմում, և պետք է խոստովանել, որ նրանք սքանչելի գործ են կատարում ինչպես Ամերիկայում, այնպես էլ Հայաստանում: Մեր տիկնանց միությունն առաջինն էր, որ կազմակերպել էր ծնողագուրկ երեխաներին օգնելու հատուկ ծրագիրը:

– *Սրբազան, մշակույթի ոլորտը, անշուշտ, մոռացված չէ Ձեր թեմում:*

– Բնավ: Ունենք երգչախմբային հանձնախումբ: Երգչախմբի կատարումների շնորհիվ է, որ հայը կարողանում է շփվել հայոց հոգևոր-եկեղեցական երգերին, Կոմիտասի, Եկմայրանի պատարագներին, ոսկեղենիկ շարականներին: Թեմում գործում է շուրջ հիսունհինգ եկեղեցի, և ամեն մի եկեղեցի ունի իր երգչախումբը, որոնք կապված են առաջնորդարանում գործող երգչախմբի հետ: Առաջնորդարանի բոլոր աշխատողները (թվով հիսուն) գիտակից և նվիրված են իրենց գործին, ունեն նպատակ՝ ամեն ինչ անել, որպեսզի Ամերիկայի նման հսկա երկրում հայ կյանքը հավիտենական պահեն, հային իր արմատներին, հայրենիքին կապել, թույլ չտալ, որ ամերիկահայը ձուլվի և կորչի, ինչպես կատարվել է շատ ազգերի հետ:

– *Ի՞նչ մտահոգություններ ունեք, ի՞նչ կավելացնեիք Դուք:*

– Ես անում եմ այն, ինչ որ պարտավոր է անել մեզանից յուրաքանչյուրը: Պատմության ընթացքում երկրորդ անգամ մեզ տրվեց հնարավորություն՝ սատարելու մեր անկախ, ազատ հայրենիքին, և մենք իրավունք չունենք վտանգելու մեր պատմության ու ժողովրդի ճակատագիրը: Ես կարծում եմ՝ բոլորս պետք է ունենաք այդ գիտակցումը և ամենք ամեն ինչ, որպեսզի գոնե այս անգամ պահենք և կերտենք մեր երկիրը և նրա քաջարի

զավակների հետ պատվով դուրս գանք: Մենք մեզ չպետք է խնայենք՝ հայրենիքը պահելու սրբազան գործում, այլապես պատմությունը չի խնայի մեզ: Պատմությունն ամենամեծ դատավորն է, որ անաչառ է և սրբագործում է բոլոր լավ ու վատ գործերը: Կմաղթեմ, որ այս գիտակցումով մեր ժողովուրդը համախմբվի իր նախագահի շուրջ, մենք էլ բերենք մեր մի կաթիլ նպաստը, քանզի մեր առջև մեծ ու սուրբ նպատակներ են, չմոռանալով մեր հայրերի վերջին խոսքը, որոնք ցեղասպանության զոհ դարձան:

31 մայիսի 1994թ.

ԱՍՏՎԱԾ ԹՈՂ ԱՆՍԱՍԱՆ ՊԱՀԻ ԼՈՒՄԱՎՈՐՉԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԳԱՀԸ

Ամառային պայծառ առավոտ էր՝ 1994 թվականի հուլիսի 18-ը:

Երախտագետ հայ եկեղեցին և ժողովուրդը ծանր սուգի դրոշ պարզեցին ու փառքով, աղոթքով մայր հողին հանձնեցին հոգնած մարմինը մեծ հայրապետի: Երանաշնորհ հայրապետի հոգին հանգավ խաղաղ և ոգեկոչեց ու պատգամ տվեց բոլոր հայերին՝ ապրել անբաժան, Հայաստանի սուրբ հողի վրա անշարժ պահել համայն հայության հոգևոր կենտրոն Ս. Էջմիածինը, որպեսզի կարողանանք կերտել լուսափայլ ապագան հայ ժողովրդի: Եվ դ՛վ է լինելու Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոսը, որը կկարողանա համախմբել համայն հայությանը մեր սուրբ եկեղեցու շուրջ, ապրի համահայկական հար-

ցերով, լինի միասնական կառավարության և ժողովրդի հետ՝ մեր ազգային ձգտումների, երազների կենսագործման ճանապարհի վրա, չտարվի երկրորդական, ավելորդ և անձնական խնդիրներով:

Այս զգացումներով ու մտահոգություններով դիմեցինք Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին:

– Սրբազան, այսօր Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերում շարժում, ժողով, հանդիպումներ, այցելություններ են: Առաջնորդները գտնում են համագործակցության և փոխըմբռնման եզրեր: Կարո՞ղ ենք վստահ լինել, որ նորընտիր կաթողիկոսը կհանդիսանա «սնեալ եւ ուսեալ առ ՄԵԾ-ին»՝ նախորդ կաթողիկոսների:

– Բազմադարյան ազգային կանոնական ավանդությանը՝ նվիրագործված մի պատկառելի սկզբունք է, որ Ամենայն Հայոց կաթողիկոսը Հայաստանյայց Եկեղեցին կազմող համայն հայության ընտրությամբ է հաստատում իր համազգային-եկեղեցական ծայրագույն պաշտոնությունը: 19-րդ դարում կարևոր նշանակություն ու ազդեցություն ունեցավ այս հարցում Ռուսիո կայսերական իշխանության կողմից հրատարակված «Պոլոժենիե» կոչված օրենքը, ըստ որի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությանն իրավունք ունեն մասնակցելու Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմերը՝ առաջադրելով մեկ աշխարհական և մեկ հոգևորական պատգամավորներ:

1925 թվականին կոմունիստների ձեռամբ փոխվեց և մշակվեց նոր օրենք, որն էլ հիմք ընդունվեց հետագա և այս ընտրությունների ժամանակ: Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է ազգային-եկեղեցական ժողովը, որի անդամ են ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Հայոց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները և առաջնորդները, իսկ ազգային-

եկեղեցական ժողովի պատգամավոր կարող են ընտրվել երեսուն տարին լրացած աշխարհականներ: Համազգային-եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահը: Նա վեցամսյա ժամանակամիջոց է նշանակում ժողովի գումարման և կաթողիկոսի ընտրության գործընթացը կազմակերպելու համար: Ընտրությունը կատարվում է ս. Էջմիածնի Մայր տաճարում՝ նախագահությամբ հայրապետական տեղակալի, իսկ ընտրության կարգը որոշում է ժողովը: Մինչև 25.000 բնակչություն ունեցող քեմն ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ 25.000 բնակիչ է պարունակում իր մեջ: Վերջին 25.000 կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10.000-ից:

Ազգային-եկեղեցական ժողովի քեմական պատգամավորների ընտրությանը մասնակցում են հոգևորականների և չափահաս քաղաքացիություն ունեցող աշխարհական իրավասու ներկայացուցիչները (ծխականները): Յուրաքանչյուր պատգամավոր ունի մեկ ձայնի իրավունք: Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ, կնքված քերթիկներով:

– Մրբազան, ընտրություններին իրավունք ունենում մասնակցելու օտար կրոններին և հարանվանություններին դավանող հայրերին:

– Ամենայն Հայոց կաթողիկոս առաջադրվելու և ընտրություններին մասնակցելու իրավունք չունեն ավետարանական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, ինչպես նաև կաթոլիկները և աղանդավորները:

– Մրբազան, բնականարար, բոլորիս անհանգստացնում է՝ արդյո՞ք ընտրությունները կընթանան դեմոկրատական սկզբունքով, և խախտումներ, անցանկալի երևույթներ չեն արձանագրվի:

– Ինչպես գիտեք, Հայաստանում քեմի առաջնորդին նշանակում է Ամենայն Հայոց կաթողիկոսը, իսկ արտասահմանի մեջ համայնքն է ընտրում իր առաջնորդին: Այդ իմաստով մեզ համար անհասկանալի է, որ ժողովրդավարության սկզբունքը հնարավոր լինի խախտել: Հուսամ, որ առաջադրված պատգամավորները վերկանգնած կլինեն անձնական շահերից, գիտակցումը կունենան հարցի կարևորության և արդարացիորեն իրենց ձայնը կտան արժանավոր հոգևորականի, որը կլինի ջերմեռանդ հավատացյալ մարդասեր, կրթանվեր ու հայրենասեր, բարոյական նկարագիր ունեցող անհատականություն:

– Մրբազան, ընտրությունների բովով դուք անցել եք, քանզի 1994 թվականի ապրիլին երկրորդ անգամ, ձայների բացարձակ մեծամասնությամբ, ընտրվեցիք Ամերիկայի Արևելյան քեմի առաջնորդ՝ վկայությունն այն սիրո և հարգանքի, որն ունի Ձեր նկատմամբ համայնքը, որին արժանացել եք եկեղեցաշեն, հայրենանվեր գործով:

Մրբազան հայր, պատմության արխիվից մեզ հայտնի է, որ առաջադրված պատգամավորներն ընտրությունից առաջ Մայր տաճարում ս. Մեղանի առջև երդում էին տալիս, որը, դժբախտաբար, կոմունիստների ժամանակ դուրս բողմվեց: Այդ արարողությունը կվերականգնվի՞:

– Ընտրությունների կարգը հաստատելիս այդ հարցը նույնպես քննարկվեց և ընդունվեց: Տեղեկացնեմ, որ երդման արարողությանը մասնակցում են միայն աշխարհական պատգամավորները:

– Ովքե՞ր են հավանական քեկնածուները:

– Հայ Առաքելական Եկեղեցու քառասուն տարին լրացած յուրաքանչյուր եպիսկոպոս կարող է առաջադրվել և ընտրվել Ամենայն Հայոց կաթողիկոս:

Ես կադրեմ, որ Լուսավորչի գահին ընտրվի արժանի անհատականություն, քանզի Ամենայն Հայոց կաթողիկոսն է ներկայացնում աշխարհին հայությանը՝ իր սրբազնասուրբ եկեղեցիով: Նա է, որ իր առաքինի անձի բարձր հմայքով, հայրապետական գուրգուրալից ժպիտով, արի ու անվեհեր հայու կեցվածքով, սրտի անքիժ բարությանը, իր գործերով կրնժայի պայծառ մարմնացումը բոլոր սրբությունների, իր մեջ կամբողջացնի մեր սուրբ եկեղեցին՝ բարձր նվիրական սկզբունքներով, հավատքով ու սիրով, հայության առավելություններն իր բոլոր առաքիներություններով:

Աստված հարցն մերոց թող անսասան պահի Հայոց Լուսավորչի Առաքելական գահը՝ Մայր հայրենիքի մեջ, Արարատի դիմաց:

21.01.1995թ.

ԱՂԱՆԴԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԻՔ Է

Դարերի ընթացքում մարդու հետ զարգացել է կրոնական զգացումը, որը նրա համար դարձել է այն ամենահզոր ուժը, որին ստորադասվել են մյուս զգացումները: Կրոնը հանդիսացել է մարդու և նրան շրջապատող տեսանելի և անտեսանելի իրականության միջև գոյություն ունեցող հարաբերության ամենաբարձր արտահայտությունը, այն միակ ձևը, որով մարդը դրսևորել է իր ինքնությունը, իմաստավորել գոյությունը, ճշգրտել Բարձրյալի մասին պատկերացումները: Պատմության ընթացքում բոլոր ժողովուրդները կրոնը հիմք են ծառայեցրել ազգային սրբությունների համար:

Աշխարհում ուրիշ ժողովուրդներ, երբ ստեղծում էին ռազմի աստվածներ, հայ ժողովուրդը պաշտում էր զարմանաբեր կանաչ պատանուն՝ Արև-Արային, մայրության, պաղաքերության աստվածուհի Անահիտին, դպրության աստված Տիրին: 301 թվականին հայ ժողովուրդը նույնացել է քրիստոնեության հետ, որը դարձել է նրա գոյության ձևը, խղճմանքի ձայնը, արժանապատվությունը, դրոշակը:

Ցավոք, 70 տարիների ընթացքում մեռցրին հավատքը: Հայ ժողովուրդն ամենից ավելի զոհեր տվեց, բնաջնջվեց կիսով չափ, կորցրեց հայրենիքի մեծագույն մասը, բայց և շնորհիվ նույն հավատքի կարողացավ պահպանել «մնացորդացը»: Ժողովրդավարական ուժերի հաղթանակի շնորհիվ, ՀՀ կառավարության պաշտպանությամբ, նորից հավատի և խղճի ազատությունը վերադարձվեց ժողովրդին: Դժբախտաբար, այսօր ազգային եկեղեցու կողքին սնկերի պես աճում են տարբեր աղանդներ, հավատալիքներ:

Մարտնչող աղանդները կարո՞ղ են մեզ համար սպառնալիք դառնալ: Այս մտահոգությամբ գրուցեցինք կրոնական-ազգային նշանավոր գործիչ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի հետ:

– Սրբազան, չզիտես ինչու, այսօր Հայաստանում աղանդների հաստատվելը վերագրում են երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին, մինչդեռ նա ոչ միայն չէր ցանկանում նրանց մուտքը մեր երկիր, այլև չուներ օրենքի այն մեխանիզմները, որով հնարավորություն տար նման ազատ գործունեության դաշտ մեր ժողովրդի համար խորթ ու օտար կրոններին: Մեզ հայտնի է, որ նրանց համար Հայաստանում հաստատվելու իրավունք ու կանաչ ճանապարհ է բացել կառավարությանն առընթեր կրոնական գործերի խորհուրդը, որի գործունեությունը մենք կարող էինք հասկանալ

մախկինում, երբ ՊԱԵ-ի օղակն էր՝ եկեղեցուն հսկելու համար, և ժամանակին ոչ մի տեղաշարժ, նույնիսկ առաջնորդի, քահանայի նշանակում չէր կարող տեղի ունենալ առանց այդ խորհրդի բարեհաճ վերաբերմունքի, իսկ այսօր մի տեսակ անհասկանալի է դառնում այդ կառույցի գոյությունը:

– Ես ուրախ եմ, որ դուք ճիշտ պատկերացում ունեք, և Ձեր մոտեցումն արդեն իսկ պատասխան է:

Ամեն մի արժեք, անշուշտ, իմաստավորվում է ճանաչողությամբ: Հայ Առաքելական Եկեղեցին, եթե խորությամբ ուսումնասիրվեր և ճանաչվեր, հազիվ թե հայ զանգվածները ցանկանային այլ աղանդների հետևորդներ դառնալ, աղանդներ, որոնք մայր եկեղեցիների կողմից իսկ (կաթոլիկ, ուղղափառ) մերժված են: Աղանդները կոսմոպոլիտ գաղափարների կրողներ են: Կապիտալի հիմնական դրույքներից մեկը՝ «Աշխատավորները հայրենիք չունեն», անվերապահորեն կարելի է տարածել վերոհիշյալ աղանդների վրա: Աղանդները հայրենիք չունեն: Հայոց Առաքելական Եկեղեցին իր հովանու ներքո, իր ծիրի մեջ ընդգրկում է և՛ ժողովրդի հավատի շրջանակները, և՛ ազգի քաղաքական, մշակութային մաքառումի ամբողջությունը: Պատահական չէ, որ Հայոց Եկեղեցու սրբերն այն հայրերն են, որոնք իրենց գործով, հանճարով, արյամբ ծառայել են հայ ժողովրդի շահերին: Մինչդեռ քրիստոնեական և ոչ քրիստոնեական աղանդներն ու հարանվանությունները բացարձակապես մերժում են ազգային հիմքերը: Բավական է թեկուզ ասել, որ Հայոց Եկեղեցու սրբերին (Գրիգոր Լուսավորիչ, Մահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց, Նարեկացի, Ս. Վարդան) նրանք կատաղորեն մերժում են: Հարկ կա՞ ապացուցելու, որ ազգային գիտակցությունից մի կողմ կանգնած հայն արդեն հայ չէ: Հիշենք թեկուզ Լեհաս-

տանի երեք հարյուրհազարանոց գաղութի ոչ հեռու անցյալի դառը ճակատագիրը: Այդ հոծ, ծաղկուն հայկական գաղութը, Հայ Առաքելական Եկեղեցու ավանդները մերժելով, ընդունեց կաթոլիկ եկեղեցու դավանանքը և գրեթե կես դարի ընթացքում իսպառ հալվեց և անհետացավ այլադավանության կրոնական ծովի մեջ: Մա միակ օրինակը չէ: Կարելի է շատ մասնավոր կամ ընդհանուր օրինակներ բվարկել:

Բարեբախտություն է թերևս այն, որ 1700 տարիների ընթացքում օտարամուտ հավատալիքները, կրոնները, դավանանքները գրեթե չեն կարողացել հայ ժողովրդի հավաքական կյանքում որակ կազմել: Այսօր վստահ կարելի է ասել՝ աշխարհով մեկ սփռված հայերը միայն այն երկրներում են կարողացել գաղութներ կազմել, դպրոցներ հիմնել, հավաքական կյանքով ապրել իբրև հայ, երբ խմբվել են Հայոց Առաքելական Եկեղեցու շուրջ: Ոչ մի ժողովրդի մոտ ոչ մի եկեղեցի այնպես չի ձուլված, չի նույնացած սեփական ժողովրդի հետ, ինչպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ հայ ժողովրդի հետ: Հայոց Առաքելական Եկեղեցու դավանանքն այլ աղանդներով, հավատալիքներով փոխարինելու դեպքում, ինչպես արդեն ասվեց, հայ հոծ զանգվածները ձնագնդի նման հալվել և ծովացրել են այլոց օվկիանոսները, երբ կտրել են իրենց պորտալարը ազգի և եկեղեցու կենարար մարմնից:

Ինչպես անընդունելի է ազգայնամոլական, կույր, այլալայաց գաղափարախոսությունը, նույնքան անցանկալի և վտանգավոր է աշխարհաքաղաքացիության վարակը, որի կրողներն են վերջերս Հայաստանում աշխուժացած բազմատեսակ ու բազմաճյուղ կրոնական աղանդները, որոնք հայ ժողովրդին բաժանում են մասերի, հոսանքների, կուսակցությունների և մեկին հանում մյու-

սի դեմ՝ խախտելով ազգի այսօր այնքան անհրաժեշտ միաբանության, համախմբվածության ոգին:

Բոլոր ժամանակներում Հայաստան մուտք գործած աղանդների նկատմամբ միշտ էլ անհաշտ պայքար է մղվել: Իր ժամանակին Գրիգոր Նարեկացին, մերժելով աղանդավորական շարժումները, գրել է. «Բազում ինչ աստվածային եւ ամենայն ինչ առաքելական ուրացել էին և կարգերը խափանել»: Հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում, հակառակ քաղաքական աշխարհասասան փոփոխիկների, ապրել ու շարունակել է իր գոյության պայքարը ամենադժվարին պայմաններում:

Այդ միտքն է հաստատում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն. «Հայոց Եկեղեցին դարեր շարունակ պահեց մեր ազգը, մշակույթը թե՛ հայրենի բնաշխարհում, թե՛ Սփյուռքում»:

Նորաբուխ քարոզիչների կողմից դատապարտվում են մեր եկեղեցու շատ սովորություններ ու սրբություններ, որոնք ավանդաբար փոխանցվել են մեզ, և մենք էլ պարտավոր ենք փոխանցել եկող սերունդներին: Անհարկի շահարկվում է մոմ վառելու գաղափարը՝ անտեսելով նաև, որ մոմ վառում է ինչպես քրիստոնյա ֆրանսիացին՝ Փարիզի Աստվածամոր տաճարում, ռուս հավատացյալը՝ Ռուբլյովի ստեղծած սրբապատկերների առաջ, այնպես էլ հայը՝ ս. Էջմիածնի Մայր տաճարում: Ապշեցուցիչ է պարզապես, թե ի՞նչ սիրտ պետք է ունենալ, մտածման ի՞նչ հորիզոն, հոգեկան ապրումների ի՞նչ ներաշխարհ, որպեսզի մեր օրերում զբաղվեն մման հարցերով:

Մենք հպարտ ենք, որ մեր եկեղեցին Հայաստանյայց եկեղեցի է, և մի փորձեք վիրավորել ու նվաստացնել մեզ: Մեղք է և ամոք: Եվ մի փորձեք շահագործել այն ներքին դժվարությունները, որոնք վերջին տարիներին արհեստականորեն ծագել են մեր ժողովրդի կյանքում և հայ եկեղեցու ծոցում, որն, անշուշտ, անցողիկ է:

Մենք՝ բոլոր հայերս, մեկ ենք և ամուր շաղկապված մեր բոլոր նվիրապետական Աթոռներով՝ Էջմիածին, Անթիլիաս, Երուսաղեմ, Կոստանդնուպոլիս, մեկ ենք և անբաժանելի մեր Առաքելական սուրբ եկեղեցիով, քրիստոնեական դավանությամբ, մեր մատյաններով, մեր սրբերով, աստվածակառույց ս. Էջմիածնով և մեր հայրենիքով:

ՀԱՎԱՏԻ 100-ԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՀ

Հայ ժողովրդի զավակների մի հատվածին բաժին ընկավ դառը ճակատագիր՝ ավերված հայրենիք, եղեռն, տարագրություն. մնացորդացը՝ «Բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան» աղոթքը շուրթերին, հայացքը հառած երկնքին, գաղթականի ցուպը ձեռքին սփռվեց աշխարհով մեկ, որի միակ զենքը նրա նախնիներից ժառանգած հավատն ու հույսն էր, թե աղջամուղջին հաջորդում են արշալույսներ՝ ողողված արևի ջերմացնող շողերով: Այդ հույսի իրագործումներից մեկը Ամերիկայում հառնեց ու դարձավ համայնք, և 1891 թվականին Վուսթեր քաղաքում կառուցվեց առաջին հայկական եկեղեցին, իսկ 1898 թվականին երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի սրբատառ կոնդակով հաստատվեց Ամերիկայի հայոց թեմը, որը տարագիրների համար հանդիսացավ փրկության լաստ, անարյուն եղեռնի դեմ՝ անխորտակելի ամբարտակ: 100 տարի հետո նրանց զավակները, «Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց քոց, Տէր» աղոթքով, մեծ շուքով տոնեցին այդ հոբելյանը:

Ստորև ներկայացվող հարցազրույցը Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս

Պարսամյանի հետ է, որը Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի համձնարարականով և ՀՀ կառավարության հատուկ հրավերով մասնակցում էր Սարդարապատի հերոսամարտի 80-ամյակին նվիրված տոնակատարությանը:

– Մրբազան հայր, որքանով մենք պանծացնում ենք Ամերիկայի թեմը՝ որպես անցյալ, նույնքան էլ այն ներկա իրողությունն է: Ո՞րն է այն խորհուրդը, որ անցյալը կամրջում է ներկային:

– Միանգամայն արդարացի եք. չգնահատել և չմեծարել մեր պապերի թողած ժառանգությունը, որի վրա ստեղծվել, բարգավաճել են այսօրվա բարեկեցիկ արժեքները, մենք ապագա սերունդներին հանձնելու ոչինչ չենք ունենա, քանզի նորը խաբսխվում է հնի վրա: Այս իմաստությամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն հատուկ կոնդակ հրապարակեց Ամերիկայի թեմի 100-ամյակի տոնակատարության առիթով, որն ընթերցվեց Ամերիկայի բոլոր եկեղեցիներում, իսկ ամերիկահայերն իրենց երախտիքի, հավատքի մոմը վառեցին անցյալի, նաև վկայելով իրենց նվիրումը ներկայի ու ապագայի նկատմամբ:

100 տարի առաջ ստեղծվեց Հյուսիսային և Հարավային Ամերիկաների թեմը, որը տարիների և օրվա հրամայականով ընդարձակվեց նոր կազմված համայնքներով, և այսօր ստեղծվել ու գործում են վեց թեմեր: Երեք թեմ Հյուսիսային և երեքը՝ Հարավային մասերում: Հյուսիսային Ամերիկայում են գտնվում Արևելյան, Արևմտյան և Կանադայի թեմերը, իսկ Հյուսիսայինում՝ Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի թեմերը: 100 տարվա կենսագրություն ունեցող մեր պապերի նվիրական հիշատակներին արժանի՝ մշակվեց հորելյանական ծրագիր, որն սկսվեց մայիսի 3-ին՝ Նյու Յորքի ս. Վարդան Մայր տաճարում՝ նախագահությամբ Ամենայն Հայոց հայրապետ Գարեգին Ա-ի: Այդ օրը տեղի ունեցավ մասնավոր

հրաշափառի և էքումենիկ եկեղեցական արարողություն, որին հրավիրվել էին վեց թեմերի թեմակալ առաջնորդներ, հայ և օտար հոգևորականներ ու աշխարհականներ: Քույր եկեղեցիների անունից ներկաներին և Հայոց հայրապետին ողջունեց ու բարի գալուստ մաղթեց Նյու Յորք քաղաքի կարդինալը: Երեք օր շարունակ հրավիրվածները հնարավորություն ունեցան առավոտյան և երեկոյան ժամերգություններին մասնակցելու, միատեղ աղոթելու, որը նպաստեց, որպեսզի տարբեր հոգևորականներ միմյանց ճանաչեն ու խորհրդածեն ապագայի մասին:

Շատ սիրալիր մթնոլորտի մեջ անցավ եկեղեցականների համագումարը, որի նյութն էր, թե ինչպես կարողանան Աստծո խոսքը հայ եկեղեցու ավանդության ու վարդապետության հիման վրա փոխանցել ներկա սերնդին և պահպանել հայ ժողովրդի բեկորները ուժացման վտանգի հորձանուտում: Համագումարն ավարտվեց Վեհափառ հայրապետի խոսքով՝ ուղղված թեմական, հոգևոր ու աշխարհիկ պատգամավորներին:

Այնուհետև մայիսի 9-ին մենք այցելեցինք Էյս Այլնդ կղզին, ուր իջևանել էին առաջին գաղթականները, նրանց թվում նաև հայեր, որտեղ հետազոտվելուց, մանրամասն քննվելուց հետո միայն իրավունք ունեին հաստատվելու Ամերիկայում: Էյս Այլնդում գեղեցիկ, հետաքրքիր ծրագրով հանդես եկան ամերիկահայ երիտասարդներից կազմված երգի-պարի համույթները, որոնց կատարումները հիացրին ներկաներին: Էյս Այլնդում տեղի ունեցած խորհրդավոր հանդիսությանն իրենց խոսքով ներկայացան Նյու Յորք քաղաքի քաղաքապետը, սենատորներ, ամերիկյան կառավարության ներկայացուցիչներ: Հանդիսությունները ոչ միայն առիթ ընծայեցին անցյալը հիշելու, պանծացնելու մեր նախնիների ազգապահպան, եկեղեցաշեն գործերը, այլև քննարկելու ներկան, որպեսզի 100 տարի հետո եկող սերունդները

կարողանան հպարտությամբ տոնել Ամերիկայի թեմի հաստատման 200-ամյակը՝ գնահատելով, որ նախորդ սերունդը պարտականությունը, առաքելությունը լավագույն կերպով փոխանցեց մեզ, որի շնորհիվ մենք շարունակեցինք մեր գոյությունը և հավատարիմ մնացինք հայ եկեղեցուն և Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

– Մորթազան, մայիս ամիսը կրկնակի տոն է Ձեզ համար, քանզի Դուք երրորդ անգամ վերընտրվեցիք Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ: Շնորհավորելով Ձեզ, ցանկալի կլինե՞ր տեղեկանալ, թե ապագայի նկատմամբ ինչպիսի՞ հայրենամտեր, եկեղեցաշեն հեռանկարներ ունեք:

– Հայ ժողովրդի գոյատևման երաշխիքը եղել է նրա հավատը: Հավատի վեմի վրա է, որ մենք պետք է կառուցենք ապագան: Քանզի այդ է եղել մեր անցյալի փորձառությունը, ստուգվել է հարյուրամյակներով: Հեռանալ արմատներից՝ նշանակում է հեռանալ մեր էությունից: Աղոթում եմ, որ մենք միշտ հավատարիմ մնանք անցյալին և այդ զգացումով կառուցենք ապագան: Ես քաջ ծանոթ եմ հայրենիքի տնտեսական, քաղաքական դժվարություններին: Ուստի անցնող 6-7 տարիների ընթացքում ջանացել ենք կարելին անել, որ հայրենիքը դուրս գա ծանր կացությունից: Նույնությամբ պիտի շարունակենք մեր ծրագրերը, որպեսզի կարողանանք ազգովին դուրս գալ կրակի միջից, վաղն էլ գորանանք ու բարգավաճենք: Ես ուրախ եմ, որ այցելությունից այցելություն տեսնում եմ երկրիս առաջընթացը: Վստահ եմ, որ ապագան փայլուն է լինելու, քանզի մեր բոլոր ծրագրերը Մփյուռքում թելադրվում են հայրենիքի և մեր ժողովրդի ներկա կացությամբ, ուստի աղոթում եմ, որ Աստված հաստատուն պահի Հայաստանի Հանրապետությունը, Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Հայրենիքն է տարաշխարհիկ հայերիս հույսի կանթերը: Մենք Հայաստանի գոյությամբ ենք կարողանում օտար ավերում տոկալ ու

պահպանել մեր տեսակը: Որքան հզոր և բարգավաճ լինի հայրենիքը, այնքան ավելի ապահով կլինի նրա տարագիր զավակների ապագան: Մենք ապագայի ազգ ենք: Եվ ապրում ենք զաւիթ արշալույսների տեսարարներով: Դիմացել ենք դարերի հողմերին, մի փոքր էլ կդիմանանք: Գալիքը մերն է: Համբերություն հայրենաբնակ իմ զավակներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հոգևոր հայր լինելը պատիվ է և պարտականություն	5
«Հայ ժողովուրդը ոգեպաշտ եղած է...»	9
Եկեղեցին հայրենիքի հեռ...	
Եկեղեցին ժողովրդի համար... ..	12
Կյանք, որ այրվում է մեղրամոմի նման	16
Պատմությունը սրբագործում է լավ ու վատ գործերը	20
«Բազում են կոչեցեալք, սակաւ են ընտրեալք»	25
Խնկի նման այրվող կյանք	28
Հոգևորականն ու զինականը	32
«Այսօր է օր, գոր արար տէր»	35

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Սատարենք միմյանց	41
«Մաղբում եմ, որ խաղաղությունը շուտ հաստատվի»	47
Յուրաքանչյուր հայ պարտավոր է ապրել իր տանը	51
Հավատանք մեր իսկ ընտրած իշխանությանը	56
Համագումար Նյու Յորքում	60
Պիտի կերտենք նոր Հայաստան	64
Համախմբել ազգի ուժերը	68
Վարդանանց անընկճելի ոգին մեր մեջ է	71
Չխնայենք մեզ հանուն հայրենիքի, այլապես պատմությունն էլ մեզ չի խնայի	75
Աստված բող անասան պահի Լուսավորչի տառքելական գահը	80
Աղանդավորությունը չարիք է	84
Հավատի 100-ամյա ճանապարհ	89

Գիրքը հրատարակված է
հեղինակի ծախսերով

Սուրբասյան Ս.

Ս 982 Խորհրդանիշ մտքի և խղճի: Հովածներ, հարցազրույցներ:
Եր.: Նաիրի, 2001.– 96 էջ:

Գիրքը (զրուցակիցներ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա, Վիգեն Եպիսկոպոս Այվազյան, ակադեմիկոսներ՝ Ֆադեյ Սարգսյան, Սեն Արևշատյան, Ռադիկ Մարտիրոսյան, բանասիրական գիտությունների բեկնածու Գևորգ Տեր-Վարդանյան, կինոռեժիսոր Ֆրունզե Դովլաթյան...) սիրո, գոհունակության ջինջ երազանքի փունջ է իբրև երախտիքի խոսք՝ նվիրաբերված Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին: Ահավասիկ, սրբազան հայր, ընդունեք այս համեստ խաչքառը Ձեր ծննդյան 50-ամյակի և քահանայական ծառայության 30-ամյակի առիթով:

0401000000

Ս 2001

705(01)2001

ԳՄԴ 86.37

ISBN 5-550-01219-7

© «Նաիրի» հրատարակչություն, 2001

ՄԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ ՄՏՔԻ ԵՎ ԽՂՃԻ
(Հաղվածներ, հարցազրույցներ)

Գեղ. խմբագիր՝ Գ. Վ. Մարիկյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան
Համակարգչային շարվածքը՝ Ն. Լ. Վարդանյանի
Ձևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 14: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91

ՀՀ Ազգային գրադարան



NL0365832

700

56. 922.